Գիրքը տպագրված է Գնահատման և թեստավորման կենտրոնում:
Տպաքանակը՝ 550 օրինակ, 84 էջ:
Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37
www.atc.am

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## Մ Ի Ա Ս Ն Ա Կ Ա Ն   Ք Ն Ն ՈՒ Թ Յ Ա Ն

## ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2009

ՀՏԴ 373:93/99
ԳՄԴ 74.2+63.3
Ը 391

*Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից*

Կազմողներ՝

**ԱՐՏԱՎԱԶԴ ԴԱՐԲԻՆՅԱՆ ԳԵՈՐԳԻԻ** - խմբի ղեկավար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

**ՍԵՎԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ ՀԱՄԼԵՏԻ** - ղեկավարի տեղակալ, պատմական գիտությունների թեկնածու, Գնահատման և թեստավորման կենտրոն

**ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ** - ասիստենտ, ԵՊՀ

**ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ** - պատմական գիտությունների թեկնածու, Կրթության ազգային ինստիտուտ

**ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՒՐԵՆԻ** - Երևանի թիվ 144 դպրոցի տնօրեն, պատմաբան

**ԳՈՀԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆԻ** - Երևանի թիվ 186 դպրոցի ուսուցչուհի

**ԱՐԵՎ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ** - ԼՂՀ, Գնահատման և թեստավորման կենտրոն, Ստեփանակերտի թիվ 10 դպրոցի ուսուցչուհի

Խմբագիրներ՝ ԱՐՏԱՎԱԶԴ ԴԱՐԲԻՆՅԱՆ
ՍԵՎԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ
ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ
ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ

Ը 391 Համաշխարհային պատմություն: Միասնական քննության ուղեցույց,-Եր.: Գնահատման և թեստավորման կենտրոն, 2009.84էջ:

ԳՄԴ 74.2+63.3

ISBN 978-99941-881-1-6

© Գնահատման և թեստավորման կենտրոն, 2009թ.



## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Նախաբան.................................................................... 3

2. Թեստի կառուցվածքը.................................................. 4

3. Թեստի բովանդակությունը.......................................... 6

4. Բովանդակային դասիչ................................................. 7

5. Թեստի թեմատիկ-բովանդակային բաշխումը............ 17

6. Բացատրություններ առաջադրանքների կատարման վերաբերյալ............................................ 18

7. Թեստ 1........................................................................ 24

8. Թեստ 1-ի պատասխանները..................................... 48

9. Թեստ 2........................................................................ 49

10. Թեստ 2-ի պատասխանները.................................. 74

11. Պատասխանների ձևաթուղթ.................................. 75

12. Պատասխանների ձևաթղթի լրացման կարգը......... 76

13. Հանձնարարվող գրականություն............................ 77

## Նշումների համար





## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

2008-2009 ուսումնական տարվանից քննական թեստի միջոցով է իրականացվում հանրակրթական դպրոցների այս և նախորդ տարիների շրջանավարտների գիտելիքների գնահատումը «Համաշխարհային պատմություն» առարկայից՝ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու վկայագիր տրամադրելու նպատակով:

«Համաշխարհային պատմություն» առարկայի ուղեցույցում ներկայացված են քննական առարկայի թեմատիկ-բովանդակային դասիչը, թեստի կառուցվածքը, թեմատիկ-բովանդակային բաշխումը ըստ առաջադրանքների տիպերի, առաջադրանքների կատարման վերաբերյալ բացատրություններ, պատասխանների ձևաթղթի լրացման կարգը: Դրանք ուղենիշ պիտի ծառայեն շրջանավարտների, դիմորդների, ինչպես նաև թեստեր կազմողների համար:

Թեստում պահպանվում է առաջադրանքների կատարման նույնատիպության՝ ընտրովի պատասխաններով առաջադրանքների սկզբունքը:

Սույն ուղեցույցը լուսաբանում է թեստերի բովանդակությունը, պարզաբանում առաջադրանքների յուրահատկությունները, ինչպես նաև օգնում հաղթահարելու դրանց լուծման հնարավոր դժվարությունները:

# ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քննական թեստը պարունակում է ընտրովի պատասխաններով 80 առաջադրանք: Այն կազմված է Ա և Բ մակարդակներից: Ա մակարդակը պարունակում է 50 առաջադրանք (1-50), իսկ Բ մակարդակը՝ 30 առաջադրանք (51-80):

Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու վկայագիր ստանալու համար քննություն հանձնողների պատրաստվածության մակարդակը ստուգվում է Ա և Բ մակարդակներն ընդգրկող միասնական թեստով:

Քննական թեստում առաջադրանքներն ըստ տիպերի դասակարգված են հետևյալ սկզբունքով.

Ա մակարդակում՝

- տարեթվերի իմացություն,
- փաստերի և երևույթների իմացություն,
- պատմական տերմինների և հասկացությունների իմացություն,
- պատմական իրադարձությունների ու երևույթների պատճառների և հետևանքների իմացություն,
- փաստերի հաջորդականության իմացություն,
- աշխատանք սկզբնաղբյուրների հետ,
- համապատասխանեցում:

Բ մակարդակում առաջադրանքների դասակարգումը կատարվել է գրեթե նույն սկզբունքով: Տարբերությունն այն է, որ Ա մակարդակի առաջին երկու տիպի առաջադրանքների փոխարեն մտցվել է նոր տիպի առաջադրանք, որը դիմորդից պահանջում է պատմական փաստերի համադրման և խմբավորման ունակություն:





# ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Հին աշխարհի պատմություն, հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Ա. Քոսյան, Ա. Խաչիկյան, Եր., 2000
2. Միջին դարերի պատմություն, հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, Վ. Դիլոյան, Գ. Հարությունյան, Եր., 2000
3. Նոր պատմություն, հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք, Վ. Ղլեչյան, Եր., 2001
4. Նորագույն պատմություն, հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք, Ն. Հովհաննիսյան, Գ. Գեղամյան, Եր., 2001

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Պատասխանների ձևաթղթում յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված է չորս վանդակ: Առաջադրանքի ճիշտ պատասխանը ձևաթղթում անցկացնելու համար տվյալ համարի առաջադրանքին համապատասխան վանդակում անհրաժեշտ է դնել «*X*» նշանը: Օրինակ՝

| 9 | Ինչպե՞ս էին անվանում Հին Հռոմում իրար դեմ կռվելու համար հատուկ վարժեցված ստրուկներին. |

1) նոբիլ
2) դիկտատոր
3) իմպերատոր
4) գլադիատոր




*Եթե դիմորդը ցանկանում է ուղղել իր կարծիքով սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում* **«Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը»** *հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում:*

*Օրինակ՝ եթե ձևաթղթում 15 առաջադրանքը լրացված է սխալ, ապա՝*

սխալ նշում




ուղղված տարբերակ








Առաջադրանքների տիպերը ներկայացված են հետևյալ համամասնությամբ.

| Առաջադրանքների տիպերը | Ա մակարդակ | Բ մակարդակ |
|---|---|---|
| I. տարեթվերի իմացություն | 12 (1-7, 21-25) | |
| II. փաստերի և երևույթների իմացություն | 14 (8-14, 26-30, 39-40) | |
| III. պատմական տերմինների և հասկացությունների իմացություն | 2 (15-16) | 6 (54-56, 70-72) |
| IV. պատմական իրադարձությունների ու երևույթների պատճառների և հետևանքների իմացություն | 4 (31-32, 41-42) | 5 (17-19, 73-74) |
| V. պատմական իրադարձությունների հաջորդականության իմացություն | 9 (17-20, 33-34, 43-45) | 5 (60-62, 75-76) |
| VI. աշխատանք սկզբնաղբյուրների հետ | 4 (35-36, 46-47) | 4 (63-64, 77- 78) |
| VII. համապատասխանեցում | 5 (37-38, 48-50) | 4 (65-66, 79-80) |
| VIII. պատմական փաստերի համադրում և խմբավորում | | 6 (51-53, 67-69) |

# ԹԵՍՏԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեստում ընդգրկված առաջադրանքները կազմվել են հանրակրթական 10-ամյա դպրոցի 5-8-րդ դասարանների « Համաշխարհային պատմություն» առարկայի ծրագրի *(*հաստատված 1999 թ. ՀՀ ԿԳՆ կողմից*)* և դրան համապատասխան ստեղծված «Հին աշխարհի պատմություն», «Միջին դարերի պատմություն», «Նոր պատմություն» և «Նորագույն պատմություն» դասագրքերի ուսումնական նյութի հիման վրա *(*Երևան, 2000-2001, «Զանգակ-97»*)*:

Ելնելով այն բանից, որ «Համաշխարհային պատմություն» առարկայից բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու վկայագիր տրամադրելու նպատակով թեստային քննություն առաջին անգամ է անցկացվելու, ինչը, նախկինի համեմատ, նկատելիորեն ընդլայնում է քննական պարտադիր ծրագրային ուսումնական նյութի բովանդակային շրջանակները, բովանդակային դասիչում չեն ընդգրկվել ծրագրային որոշ թեմաներ:

Փոխարենը թեստային առաջադրանքները կազմելիս օգտագործվել են տեքստերում շրջանակների մեջ ներկայացված վավերագրերն ու փաստաթղթերը, ինչպես նաև պատմական իրադարձությունները նկարագրող լրացուցիչ նյութեր: Թեստերում օգտագործվել են նաև վերոնշյալ դասագրքերի վերջում զետեղված տերմինների բառարանները:





# ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ



2010 թ. Միասնական քննություն
*Պատասխանների ձևաթուղթ*
*Համաշխարհային պատմություն*

Ազգանուն

Անուն Հայրանուն

Անձնական համար

Ուշադրություն

* Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով:
* Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):
* Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով՝ 1234567890

1 3

Թեստ №

Ա մակարդակ

Բ մակարդակ

Ստորագրություն

Ծանոթ եմ քննության կարգին

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

*Դիմորդը կարող է թեստ-գրքույկի դատարկ մասերում սևագրություն կատարել: Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը, որի ճիշտ լրացումից է նաև կախված դիմորդի քննական միավորը:*

## ԹԵՍՏ 2-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

| ԹԵՍՏ 2 | | | |
|---|---|---|---|
| Ա մակարդակ | | | |
| 1 | 2 | 26 | 3 |
| 2 | 3 | 27 | 4 |
| 3 | 2 | 28 | 1 |
| 4 | 3 | 29 | 1 |
| 5 | 3 | 30 | 1 |
| 6 | 3 | 31 | 2 |
| 7 | 2 | 32 | 2 |
| 8 | 4 | 33 | 2 |
| 9 | 3 | 34 | 2 |
| 10 | 2 | 35 | 3 |
| 11 | 2 | 36 | 1 |
| 12 | 4 | 37 | 2 |
| 13 | 3 | 38 | 1 |
| 14 | 4 | 39 | 1 |
| 15 | 3 | 40 | 3 |
| 16 | 4 | 41 | 4 |
| 17 | 4 | 42 | 3 |
| 18 | 1 | 43 | 1 |
| 19 | 1 | 44 | 2 |
| 20 | 2 | 45 | 1 |
| 21 | 4 | 46 | 3 |
| 22 | 2 | 47 | 1 |
| 23 | 4 | 48 | 2 |
| 24 | 3 | 49 | 2 |
| 25 | 1 | 50 | 1 |

| ԹԵՍՏ 2 | | | |
|---|---|---|---|
| Բ մակարդակ | | | |
| 51 | 3 | 66 | 2 |
| 52 | 4 | 67 | 1 |
| 53 | 1 | 68 | 3 |
| 54 | 3 | 69 | 4 |
| 55 | 1 | 70 | 2 |
| 56 | 2 | 71 | 2 |
| 57 | 4 | 72 | 3 |
| 58 | 1 | 73 | 2 |
| 59 | 3 | 74 | 2 |
| 60 | 2 | 75 | 2 |
| 61 | 2 | 76 | 2 |
| 62 | 3 | 77 | 4 |
| 63 | 4 | 78 | 2 |
| 64 | 4 | 79 | 3 |
| 65 | 1 | 80 | 2 |





## ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԴԱՍԻՉ

## ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### ԲԱԺԻՆ Ա. ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔ

### ԹԵՄԱ 1. ԵԳԻՊՏՈՍ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ. ՀԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ: Միասնական պետության կազմավորումը: Պետության հզորացումը Հին թագավորության շրջանում: Հին թագավորության անկումը:

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԻՋԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: Միասնական պետության վերականգնումը: Եգիպտոսի տնտեսության զարգացումը: Եգիպտոսի նվաճողական պատերազմները: Եգիպտոսի նվաճումը հիքսոսների կողմից:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԶՈՐԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ: Եգիպտոսը Առաջավոր Ասիայի հզորագույն պետություն: Փարավոն Էխնաթոնը և եգիպտական աստվածները: Պետության թուլացումը և անկումը:

### ԹԵՄԱ 2. ՄԻՋԱԳԵՏՔԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԻՆ ԲԱԲԵԼՈՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: Բաբելոնի հզորացումը Համմուրապիի օրոք: Համմուրապիի օրենքները: Բաբելոնիան կասսիտների տիրապետության շրջանում:

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ. Ասորեստանի արքաների արշավանքները: Ասորեստանյան բանակը: Ասորեստանի և Ուրարտուի մրցակցությունը: Ասորեստանի թուլացումն ու անկումը:

### ԹԵՄԱ 3. ՓՈՔՐ ԱՍԻԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԽԵԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ: Բնական պայմանները և բնակչության զբաղմունքը: Պետության առաջացումը: Տելեպինուսի օրենքը: Խեթերի նվաճումները. աշխարհակալ տերության ստեղծումը: Պետության անկումը: Խեթերը և Հայկական լեռնաշխարհի երկրները:

### ԹԵՄԱ 4. ԻՐԱՆ

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ: Կյուրոս Մեծի նվաճումները: Աքեմենյան տերության կազմավորումը. Բեհիսթունի արձանագրությունը: Դարեհ I-ի բարեփոխումները: Աքեմենյան տերության թուլացումն ու անկումը:

### ԲԱԺԻՆ Բ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

### ԹԵՄԱ 5. ՔԱՂԱՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

ԱԹԵՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ: Ատտիկայի բնական պայմանները: Արիստոկրատիայի կառավարումը: Աթենական պետության կազմավորումը: Դրակոնի օրենքները: Սոլոնի բարեփոխումները: Պիսիստրատի տիրանիան: Կլիսթենեսի բարեփոխումը: Օստրակիզմ:

ՍՊԱՐՏԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ: Լակոնիայի բնական պայմանները: Պետության առաջացումը: Սպարտացիների դաստիարակությունը: Սպարտական բանակը: Հելոտներ:

## ԹԵՄԱ 6. ՀՈՒՆԱՍՏԱՆԸ ԴԱՍԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՀՈՒՅՆ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ: Պատերազմի պատճառները: Մարաթոնի ճակատամարտը: Թերմոպիլի ճակատամարտը: Սալամինի ծովամարտը: Պատերազմների ավարտը:

ԴԱՍԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ: Մշակույթի ծաղկման նախադրյալները: Օլիմպիական խաղերը: Հունական թատրոնը: Տրագեդիա և կոմեդիա:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԾԱՂԿՈՒՄԸ: Ճարտարապետությունը: Քանդակագործությունը և նկարչությունը: Կրթությունն ու գիտությունը:

## ԹԵՄԱ 7. ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ: Մակեդոնիայի վերելքը: Հունաստանի հպատակեցումը: Աքեմենյան Պարսկաստանի դեմ արշավանքի նախապատրաստումը: Ալեքսանդրի գահակալումը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ: Փոքր Ասիայի նվաճումը: Ասորիքի և Եգիպտոսի գրավումը: Գավգամելայի ճակատամարտը: Միջագետքի և Իրանի գրավումը:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ՏՐՈՀՈՒՄԸ: Արշավանքը Միջին Ասիա և Հնդկաստան: Ալեքսանդրի պետությունը: Ալեքսանդրի վախճանը: Ալեքսանդրի տերության տրոհումը:

## ԲԱԺԻՆ Գ. ՀԻՆ ՀՌՈՄ

## ԹԵՄԱ 8. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (Ք.Ա. III ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ Ք.Ա. II ԴԱՐԻ ՎԵՐՋԸ)

ՊՈՒՆԻԿՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ: Հին Կարթագենը: Պատերազմը Սիցիլիայի համար: Պունիկյան II պատերազմը: Հաննիբալը Իտալիայում: Կարթագենի կործանումը:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ Ք.Ա. II ԴԱՐՈՒՄ: Նվաճումների պատճառները: Մակեդոնիայի ջախջախումը: Հունաստանի նվաճումը: Մագնեսիայի ճակատամարտը: Փոքր Ասիայի պետությունների անկախացումը:

ՀՌՈՄԻ ՎԵՐԱԾՎԵԼԸ ՀԶՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ: Հռոմեական պրովինցիաները: Հռոմի վերածվելը հզորագույն տերության:

## ԹԵՄԱ 9. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ: Մարիուսի ռազմական բարեփոխումը: Միհրդատյան պատերազմները: Սուլլայի դիկտատուրան: Սպարտակի ապստամբությունը:





**80** Կատարել համապատասխանեցում.

| N | Իրադարձությունը | N | Տարեթիվը | N | Գործիչը | N | Վայրը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Անտանտի և Թուրքիայի միջև կնքված պայմանագիրը | 1 | 1920 թ. օգոստոսի 10 | 1 | Էյզենհաուեր | 1 | Մոսկվա |
| 2 | Խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագիրը | 2 | 1944 թ. հունիսի 6 | 2 | Չերչիլ | 2 | Ֆրանսիա |
| 3 | Երկրորդ ճակատի բացումը Եվրոպայում | 3 | 1939 թ. օգոստոսի 23 | 3 | Ավ. Ահարոնյան | 3 | Ֆուլտոն |
| 4 | «Սառը պատերազմի» սկիզբը | 4 | 1946 թ. մարտի 5 | 4 | Մոլոտով | 4 | Սևր |

1)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 1 | 3 | 4 |
| 2 | 3 | 4 | 1 |
| 3 | 2 | 1 | 2 |
| 4 | 1 | 2 | 3 |

2)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 1 | 3 | 4 |
| 2 | 3 | 4 | 1 |
| 3 | 2 | 1 | 2 |
| 4 | 4 | 2 | 3 |

3)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 1 | 3 | 4 |
| 2 | 3 | 4 | 1 |
| 3 | 2 | 1 | 2 |
| 4 | 4 | 2 | 1 |

4)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 1 | 3 | 4 |
| 2 | 3 | 4 | 1 |
| 3 | 2 | 1 | 2 |
| 4 | 3 | 2 | 3 |

**78** Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.

«Խորհրդային զորքերի կենտրոնացումը գերմանական սահմանի մոտ հասել է այնպիսի չափերի, որ գերմանական կառավարությունն այլևս չի կարող համբերել»:

1) Ռիբենտրոպը
2) Շուլենբուրգը
3) Հիտլերը
4) Մուսոլինին

**79** Կատարել համապատասխանեցում.

| N | Գործիչը | N | Պետությունը | N | Գահակալման կամ կառավարման տարիները |
|---|---|---|---|---|---|
| 1) | Օգոստոս | 1) | Հին Եգիպտոս | 1) | Ք. ա. 1279-1213 թթ. |
| 2) | Համմուրապի | 2) | Հռոմ | 2) | Ք. ա. 336-323 թթ. |
| 3) | Ալեքսանդր Մեծ | 3) | Բաբելոն | 3) | Ք. ա. 27 թ. - Ք. հ. 14 թ. |
| 4) | Ռամզես 2-րդ | 4) | Մակեդոնիա | 4) | Ք. ա. 1792-1750 թթ. |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 3 | 4 |
| 3 | 4 | 2 |
| 4 | 1 | 2 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 1 | 4 |
| 3 | 4 | 2 |
| 4 | 1 | 1 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 3 | 4 |
| 3 | 4 | 2 |
| 4 | 1 | 1 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 3 | 4 |
| 3 | 4 | 2 |
| 1 | 4 | 1 |



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ: Առաջին եռապետությունը: Հռոմը և Հայաստանը: Կրասոսի արշավանքը:

**ԹԵՄԱ 10. ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀՌՈՄՈՒՄ**

ՀՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ: Կեսարը և Պոմպեոսը: Հուլիոս Կեսարի դիկտատուրան: Հանրապետականները և կեսարականները:

ՕԳՈՍՏՈՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ: ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Օկտավիանոսը և Անտոնիոսը: Օկտավիանոսի հաղթանակը: Օգոստոսի միապետությունը: Օգոստոսը և Հայաստանը:

**ԹԵՄԱ 11. ՀՌՈՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ**

ՀԻՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ: Հռոմեական կրոնը: Կրթությունը և դաստիարակությունը: Գիտությունը և գրականությունը:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ: Հռոմեական մշակույթի նշանակությունը: Ճարտարապետությունը: Արվեստը:

**ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ԲԱԺԻՆ Դ. ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐ**

**ԹԵՄԱ 12. ՄԻՋՆԱԴԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԵԾ ԳԱՂԹԸ: ՀԻՆ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ ԵՎ ՀՌՈՄԸ: Ժողովուրդների մեծ գաղթը. նախադրյալները, սկիզբը, արդյունքները: Հին գերմանացիները և Հռոմը: Հռոմեական կայսրության բաժանումը: Գերմանական ցեղերի տեղաշարժերը և տարաբնակեցումը կայսրության տարածքում:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ: Բարբարոսներն Իտալիայում: Պայքար Օդոակրի պետության և օստգոթերի միջև: Պայքար կայսրության ժառանգության համար: Արևմտյան Հռոմեական կայսրության անկման հետևանքները:

**ԹԵՄԱ 13. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՈՍԿԵԴԱՐԸ: Հուստինիանոս I: Հուստինիանոսի պատերազմները: Հուստինիանոսի օրենսդրությունը: Հուստինիանոսի կառույցները:

ԻՍԼԱՄԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԾՈՒՄԸ: Մուհամեդը և իսլամը: Իսլամի տարածումը Արաբիայում: Վաղ իսլամը: Արաբական նվաճումները: Պառակտումն իսլամում. սուննիներ, շիաներ:

ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ: Օմայանների խալիֆայությունը: Աբբասյանների խալիֆայությունը: Արաբական մշակույթը:

**ԹԵՄԱ 14. ԵՎՐՈՊԱՆ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ: ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՎԵՐԵԼՔԸ**

ՖՐԱՆԿՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ VII-IX ԴԱՐԵՐՈՒՄ: Ֆրանկների պետությունը վերջին Մերովինգների օրոք: Կառլոս Մարտելը և Պիպին Կարճահասակը: Կառլոս Մեծի պատերազմները: Կառլոս Մեծ՝ «Աստծո

ընտրյալ կայսրը»: Վերդենի բաժանքը: «Կարոլինգյան վերածնունդը», դրա պատմական նշանակությունը:

ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՎԵՐԵԼՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ: Բարսեղ I-ի գահակալումը: Բյուզանդիայի վերելքը Բարսեղ I-ի և նրա հաջորդների օրոք: Բյուզանդական վերածնունդը: Բյուզանդիան XI դարի երկրորդ կեսին:

ՀԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԵԼՔԸ: Արևելյան սլավոնները վաղ միջնադարում, «Վարյագներից մինչև հույներ» ճանապարհը: Հին Ռուսիա պետության կազմավորումը: Վլադիմիր Սվյատոսլավիչ, քրիստոնեության ընդունումը: Յարոսլավ Իմաստուն, «Ռուսկայա պրավդա»:

## ԲԱԺԻՆ Ե. ՄԻՋՆԱԴԱՐԸ ԾԱՂԿՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

### ԹԵՄԱ 15. ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ

ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ: Ավատատիրական հասարակարգի ձևավորման ուղիները: Ավատատիրական հասարակարգի էությունը: Ավատատիրական դասի ձևավորումը, ավատատիրական սանդուղքը:

ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ: Քաղաքների առաջացման նախադրյալները: Միջնադարի քաղաքները: Քաղաքի բնակչությունը և նրա հիմնական զբաղմունքը: Համքարություններ:

### ԹԵՄԱ 16. ԽԱՉԱԿՐԱՑ ՇԱՐԺՈՒՄԸ

ԽԱՉԱԿՐԱՑ ՇԱՐԺՈՒՄԸ: Խաչակրաց շարժման նախադրյալները: Ուրբանոս II պապի կոչը: Չքավորների արշավանքը:

ԽԱՉԱԿՐԱՑ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ԽԱՉԱԿՐԱՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ: Խաչակրաց առաջին արշավանքը: Երուսաղեմի թագավորությունը: Խաչակրաց մյուս պետությունները: Հոգևոր-ասպետական միաբանություններ:

ԽԱՉԱԿՐԱՑ ԵՐՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆՔԸ: Սալահ ադ Դին: Երուսաղեմի նվաճումը: Երեք խաչակիր արքաներ. Ֆրիդրիխ I Բարբարոսա, Ռիչարդ I Առյուծասիրտ, Ֆիլիպ II Օգոստոս:

### ԹԵՄԱ 17. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ

Վաղ միջնադարի դպրոցը. «յոթ ազատ արվեստները»: Համալսարանների առաջացումը: Համալսարանական ուսուցման կազմակերպումը: Սքոլաստիկա. Թովմա Աքվինացին և նրա քննադատները:

## ԲԱԺԻՆ Զ. ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՇՈՒՆԸ

### ԹԵՄԱ 18. ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ: Պատերազմի սկիզբը: Տրուայի հաշտությունը: Օռլեանի կույսը. Ժաննա դ'Արկ: Լյուդովիկոս 11-րդ և Կառլոս Խիզախ: Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմը:





զ) խեթերի կողմից Բաբելոնի նվաճումը
է) հույն-պարսկական պատերազմների ավարտը
ը) Հուլիոս Կեսարի կողմից Ռուբիկոն գետն անցնելը և քաղաքացիական պատերազմի սկիզբը Հռոմում
թ) Պունիկյան 1-ին պատերազմի ավարտը
ժ) կայսրության առաջացումը Հռոմում

1) ա, ը, բ, գ, ե, դ, ժ, թ, զ, է
2) բ, զ, ա, գ, է, դ, թ, ե, ը, ժ
3) ա, ը, բ, գ, ե, ժ, դ, է, զ, թ
4) ա, ը, բ, գ, ժ, ե, դ, թ, զ, է

**76** **Պատմական գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության հաջորդականության.**

ա) Թոմաս Մյունցեր
բ) Բորիս Ելցին
գ) Ալեքսանդր Մակեդոնացի
դ) Տիգրան II Մեծ
ե) Կառլոս Մեծ
զ) Նապոլեոն Բոնապարտ
է) Վուդրո Վիլսոն
ը) Դենի Դիդրո
թ) Շառլ դը Գոլ
ժ) Ալեքսանդր II Ռոմանով

1) գ, դ, ե, ա, ը, բ, զ, ժ, է, թ
2) գ, դ, ե, ա, ը, զ, ժ, է, թ, բ
3) գ, ա, թ, է, զ, ե, բ, ը, դ, ժ
4) գ, դ, ե, ա, ը, զ, ժ, թ, բ, է

**77** **Գտնել դասագրքից մեջբերված հատվածում բաց թողնված անունների ճիշտ եռյակը.**

«------------------- մանկության տասը տարիներն անց էր կացրել ----------------------- և շատ բան էր սովորել քաղաքակիրթ հույներից: Նա կայսրերի նման իրեն ներկայացնում էր որպես արվեստի և գիտության հովանավոր: Սակայն նրա հրամանով մահապատժի ենթարկվեց նշանավոր փիլիսոփա և պետական գործիչ ---------------------, որին անվանում են «վերջին հռոմեացի»»:

1) Օդոակր, Աթենք, Բոեցիոս
2) Օդոակր, Կոստանդնուպոլիս, Ալքուին
3) Թեոդորիք, Աթենք, Ալքուին
4) Թեոդորիք, Կոստանդնուպոլիս, Բոեցիոս

**73** **Նշվածներից որո՞նք են հանդիսանում խաչակրաց շարժման ներքին պատճառ.**

ա) թուրք-սելջուկների կողմից Փոքր Ասիայի մեծ մասի նվաճումը և Կոստանդնուպոլսին սպառնացող վտանգը
բ) առաջին խաչակրաց արշավանքին նախորդած երեք տարիների անընդմեջ անբերրիությունն ու սովը
գ) դեպի Երուսաղեմ քրիստոնյաների ուխտագնացությանը սելջուկների հարուցած խոչընդոտները
դ) հայրական ժառանգությունից ասպետների զրկված լինելու հանգամանքը
ե) թուրք-սելջուկների հարկային ծանր քաղաքականությունը

1) ա, գ
2) բ, դ
3) ա, ե
4) գ, ե

**74** **Ի՞նչ հետևանքներ ունեցան 1865-1866թթ. ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ կատարված 13-րդ և 14-րդ փոփոխությունները: Բերված փաստարկներից ընտրել երեքը:**

ա) Օրինականացվեց ստրկության վերացումը:
բ) Սևամորթների իրավունքները սահմանափակվեցին:
գ) Հարավի պլանտացիոն տնտեսությունները քայքայվեցին:
դ) Հարավի որոշ նահանգներում պահպանվեց ստրկությունը:
ե) Սևամորթների համար դպրոցներ չբացվեցին:
զ) Սևամորթները ստացան քաղաքացիական իրավունքներ և կարող էին պաշտոններ զբաղեցնել:

1) բ, գ, դ
2) ա, գ, զ
3) գ, դ, զ
4) դ, ե, զ

**75** **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Դրակոնի կողմից գրավոր օրենքների կազմումը Աթենքում
բ) Նուբիայի վերջնական նվաճումը Սենուսերթ III փարավոնի կողմից
գ) Աքեմենյան տերության առաջացումը
դ) հելլենիզմի դարաշրջանի սկզբնավորումը
ե) իտալիկյան ցեղերին Հռոմի քաղաքացիություն շնորհելը





ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ: ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ: Թյուրքական ցեղերը Փոքր Ասիայում: Օսմանյան պետության հիմնադրումը: Թուրքական նվաճումները Բալկաններում: Բյուզանդական կայսրության անկումը:

**ԹԵՄԱ 19. ՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ**

ՄՈՍԿՈՎՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ: Կենտրոնացված պետության ստեղծման նախադրյալները: Մոսկվայի բարձրացումը: Ռուսական հողերի միավորումը Իվան 3-րդի օրոք: Կենտրոնացված պետության կազմավորման ավարտը. Վասիլի 3-րդ:

**ԲԱԺԻՆ Է. ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՇԵՄԻՆ**

**ԹԵՄԱ 20. ՎԵՐԱԾՆՈՒՆԴ: ՌԵՖՈՐՄԱՑԻԱ**

ՎԱՂ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ԵՎ ՀՈՒՄԱՆԻԶՄՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ: «Վերածնունդ» հասկացությունը: Վերածննդի նախադրյալները. Ֆլորենցիա: Հումանիստները: Վերածննդի գրականությունը: Իտալական Վերածննդի արվեստը:

ԲԱՐՁՐ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ: Արվեստը. Լեոնարդո դա Վինչի, Միքելանջելո Բուոնարոտի, Ռաֆայել Սանտի: Նիկոլո Մաքիավելի:

ՌԵՖՈՐՄԱՑԻԱ: «Ռեֆորմացիա» հասկացությունը: Մարտին Լյութեր: Գյուղացիական պատերազմը Գերմանիայում: Լյութերական եկեղեցու կազմավորումը:

**ԹԵՄԱ 21. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Քրիստափոր Կոլումբոս: Էնրիկե Ծովագնաց: Պորտուգալական գաղութների հիմնումը: Իսպանացիները Նոր աշխարհում: Ամերիկայի անվանակոչումը: Նոր հայտնագործություններ. Բալբոա, Մագելան:

**ԹԵՄԱ 22. ՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XVI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ**

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ ԻՎԱՆ IV ԱՀԵՂԻ ՕՐՈՔ: Իվան IV. Մեծ իշխան և ցար: Օպրիչնինա: Իվան Ահեղի արտաքին քաղաքականությունը:

**ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ԲԱԺԻՆ Ը. ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ XVII ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԿԵՍԸ**

**ԹԵՄԱ 23. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ**

ԱՇԽԱՐՀԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՍԿԶԲԻՆ: Համաշխարհային պատմության երեք մեծ փուլերը: Հասարակության զարգացման գլխավոր արդյունքները XVI դարում:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ XVII-XIX ԴԱՐԵՐՈՒՄ: Կապիտալիզմի ձևավորումը: Մայրցամաքների և երկրների անհավասարաչափ զարգացումը:

### ԹԵՄԱ 24. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

1640-1660 ԹԹ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ: Հեղափոխության պատճառները: Քաղաքացիական պատերազմը. Չարլզ I և Օ. Կրոմվել: Հեղափոխության ավարտը և Ստյուարտների վերականգնումը:

ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ: 1688-1689 թթ. հեղաշրջումը («Փառահեղ հեղափոխություն»): Պետական կարգը XVIII դարում:

### ԹԵՄԱ 25. ՖՐԱՆՍԻԱ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՍԿԻԶԲԸ: Լուսավորական շարժումը (Մոնտեսքյո, Վոլտեր, Ժ.-Ժ. Ռուսո, Դ. Դիդրո): Հեղափոխության հասունացումը: Ֆրանսիական մեծ հեղափոխության սկիզբը:

ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ: Սահմանադրական միապետության ստեղծումը (Միրաբո): Հանրապետության առաջացումը (Ժ. Պ. Մարատ, Ժ. Դանտոն): Ֆրանսիական հանրապետությունը 1792-1799 թթ. (Մ. Ռոբեսպիեր):

ԿՈՆՍՈՒԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ. 1799 թ. հեղաշրջումը (Բրյումերի 18): Նապոլեոն Բոնապարտ: Առաջին կայսրության առաջացումը: Կայսրության ներքին և արտաքին քաղաքականությունը (Շ. Թալեյրան, Ժ. Ֆուշե):

ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ: ՎԻԵՆՆԱՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ. Նապոլեոնի 1812 թ. արշավանքը Ռուսաստան: Կայսրության կործանումը: Վիեննայի վեհաժողովը:

### ԹԵՄԱ 26. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ: Անգլիայի հյուսիսամերիկյան գաղութները XVII-XVIII դդ.: Անկախության համար պատերազմի սկիզբը: Պատերազմի ընթացքը և ավարտը (Թ. Ջեֆերսոն, Բ. Ֆրանկլին, Ջ. Վաշինգտոն): ԱՄՆ Սահմանադրության ընդունումը:

ԱՄՆ-Ն XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ: Տնտեսական զարգացումը և տարածքային աճը: Աբոլիցիոնիզմ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: Քաղաքացիական պատերազմը 1861-1865 թթ. (Ա. Լինկոլն):

### ԹԵՄԱ 27. ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ: Բացարձակ միապետության ձևավորման նախադրյալները: Պյոտր Մեծի բարեփոխումները: Հյուսիսային պատերազմը: Կասպիական արշավանքը:





ե) բռնի ռազմական միջոցառումների համակարգ, որի նպատակն է տվյալ տարածքը մեկուսացնել աշխարհից
զ) ցարին կից բարձրագույն օրենսդիր կարգադրիչ և կատարողական մարմին Ռուսաստանում

1) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ե, 5-ա
2) 1-զ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-դ
3) 1-զ, 2-դ, 3-ա, 4-բ, 5-ե
4) 1-զ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-ա

**72** **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) համադաշնություն
2) բունդեստագ
3) այլախոհ
4) ֆակիր
5) «Մարշալի պլան»

ա) ազատ ստեղծագործության և պարտադրված արհեստական կաղապարների վերացմանը ձգտող արվեստագետներին տրված անվանում
բ) միջպետական միություն, որի անդամ յուրաքանչյուր պետություն պահպանում է իր անկախությունն ու ինքնիշխանությունը
գ) Ղուրանի և մուսուլմանական օրենսդրության՝ շարիաթի լավագույն գիտակ և մեկնաբան հոգևոր առաջնորդ
դ) գերմանական պառլամենտ
ե) Առաջին աշխարհամարտից հետո ԱՄՆ-ի կողմից Գերմանիային տրված 10 միլիարդ դոլարի օգնության ծրագիր
զ) Երկրորդ աշխարհամարտից հետո ԱՄՆ-ի կողմից արևմտաեվրոպական երկրներին տրամադրված 13 միլիարդ դոլարի օգնության ծրագիր

1) 1-բ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-դ
2) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա, 5-զ
3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ, 5-զ
4) 1-բ, 2-ա, 3-գ, 4-ե, 5-դ

**70** **Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) ժողովրդական ժողով
2) օստրակիզմի դատարան
3) եռապետություն
4) ծերակույտ
5) իմպերատոր
6) տիրան

ա) կառավարման բարձրագույն մարմին Հին Աթենքում
բ) պետությունը միայնակ կառավարող պաշտոնյա Հին Հունաստանում
գ) երեք հզոր զորավարների իշխանություն
դ) աթենական դեմոկրատիան պաշտպանող հատուկ մարմին
ե) բանակի գլխավոր հրամանատար Հին Հռոմում
զ) 30 արիստոկրատներից կազմված կառավարման մարմին Հին Սպարտայում
է) քաղաքային արտոնյալ համայնք

1) 1-ա, 2-դ, 3-զ, 4-գ, 5-ե, 6-բ
2) 1-ա, 2-դ, 3-գ, 4-զ, 5-ե, 6-բ
3) 1-ա, 2-դ, 3-գ, 4-զ, 5-բ, 6-ե
4) 1-ա, 2-դ, 3-բ, 4-զ, 5-ե, 6-գ

**71** **Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) սենատ
2) շրջափակում
3) դեկրետ
4) դեպարտամենտ
5) պրոլետարիատ

ա) պետական կառավարող մարմնի կամ պետության ղեկավարի ընդունած օրենքների տարատեսակ
բ) հասարակության այն անդամները, որոնք ունեն սահմանադրությամբ որոշված իրավունքներ ու պարտականություններ
գ) վարչական միավոր Ֆրանսիայում
դ) դասակարգ, որն ապրում է վարձու աշխատանքով





ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ: Ռուսական կայսրության հզորացումը. Եկատերինա II: Ֆրանսիական մեծ հեղափոխությունը և Ռուսաստանը:

**ԲԱԺԻՆ Թ. ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ**

**ԹԵՄԱ 28. ՖՐԱՆՍԻԱՆ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.**
Երկրորդ կայսրությունը: Ֆրանս-պրուսական պատերազմը: Փարիզի Կոմունան: Երրորդ հանրապետության պետական կարգը: Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը:

**ԹԵՄԱ 29. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ**
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ: Գերմանիայի միավորման պատմական նախադրյալները: Պայքար Գերմանիայի միավորման համար: Գերմանիայի միավորումը: Օ. Բիսմարկ:

**ԹԵՄԱ 30. ԻՏԱԼԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ**
Իտալիան 1848-1849 թթ. ազգային հեղափոխությունից հետո: Երկրի միավորման սկիզբը (Կ. Բ. Կավուր): Ջ. Գարիբալդու «հազարյակի» արշավանքը: Իտալիայի միավորման ավարտը:

**ԹԵՄԱ 31. ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ**
Ավստրիական կայսրության թուլացումը: Երկմիասնական միապետության ստեղծումը 1867 թ.: Ավստրո-Հունգարիայի արտաքին քաղաքականությունը:

**ԲԱԺԻՆ Ժ. ԱՍԻԱՆ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

**ԹԵՄԱ 32. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԿՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ**
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐՑԸ: ԲԱԼԿԱՆՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ: Արևելյան հարցի էությունը: Հունաստանի անկախության վերականգնումը: Սերբիայի ինքնավարության ձեռք բերումը:
ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ: Պատերազմի պատճառները, սկիզբը, ընթացքը, հետևանքները:
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ: ԲԵՌԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ: Արևելյան ճգնաժամը 1875-1876 թթ.: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Բեռլինի կոնգրեսը. Բալկանյան երկրների անկախության հաստատումը, Հայկական հարցը:

**ԲԱԺԻՆ ԺԱ. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ (1914-1918 ԹԹ.)**
**ԹԵՄԱ 33. ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ**
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՍԿԻԶԲԸ: Պայքար աշխարհի վերաբաժանման համար: Առաջին աշխարհամարտի

պատճառները և սկիզբը:

ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԸՆԹԱՑՔԸ 1914-1916 ԹԹ.: Պատերազմի գլխավոր ռազմաբեմերը: Ռազմական գործողությունները 1914-1916 թթ.:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ 1917 Թ.: ՇՐՋԱԴԱՐՁ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ: Ռազմաքաղաքական ճգնաժամը Ռուսաստանում: Փետրվարյան հեղափոխությունը (Ա. Կերենսկի): Հոկտեմբերյան հեղափոխությունը (Վ. Լենին, Լ. Տրոցկի): Ռուսաստանի դուրս գալը պատերազմից. Բրեստ - Լիտովսկի պայմանագիրը:

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ: Գերմանիայի և նրա դաշնակիցների պարտությունը: Աշխարհամարտի գլխավոր արդյունքները:

## ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### ԲԱԺԻՆ ԺԲ. ԱՇԽԱՐՀԸ ԵՐԿՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

### ԹԵՄԱ 34. ՎԵՐՍԱԼ-ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՎԵՐՍԱԼ-ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ: Փարիզի հաշտության խորհրդաժողովը: Պատերազմի արդյունքների ամփոփումը: Սևրի պայմանագիրը և Հայաստանը: Վաշինգտոնյան համաձայնագրերը:

ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ: Ազգերի լիգայի ստեղծումը: Ազգերի լիգան և Հայկական հարցը:

### ԹԵՄԱ 35. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ 1922-1939 ԹԹ.

ԽՍՀՄ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ: Ուկրաինան, Բելոռուսիան, Անդրկովկասը և Միջին Ասիան 1918-1922 թթ.: ԽՍՀՄ-ի կազմավորումը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ: Վարչահրամայական համակարգի հաստատումը: Քաղաքական բռնությունները:

### ԹԵՄԱ 36. ԳԵՐՄԱՆԻԱ

ՎԱՅՄԱՐՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ: 1918 թ. Նոյեմբերյան հեղափոխությունը և միապետության տապալումը: Վայմարյան հանրապետությունը: Ֆաշիզմի առաջացումը:

ԳԵՐՄԱՆԻԱՆ 1933-1939 ԹԹ.: Գերմանիան ֆաշիստական վարչակարգի ներքո: Գերմանիայի արտաքին քաղաքականությունը:

### ԹԵՄԱ 37. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ՖՐԱՆԿԼԻՆ ՌՈՒԶՎԵԼՏԻ ՆՈՐ ԿՈՒՐՍԸ: Պետության կարգավորիչ դերի մեծացումը տնտեսության մեջ: Սոցիալական ապահովության քաղաքականությունը Ֆ. Ռուզվելտի օրոք: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը Ֆ. Ռուզվելտի օրոք:





**68** **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա) Առաջին արշավանքի արդյունքում խաչակիրներն Արևելքում ստեղծեցին չորս պետություն:
բ) Սուննիները ընդունում են իմամի մասին գաղափարը:
գ) Ավատատիրական քաղաքի առաջացման առաջին պայմանը արհեստի անջատումն էր գյուղատնտեսությունից:
դ) Կարոլինգներին անվանում էին «ծույլ թագավորներ»:
ե) Քրիստոնեություն ընդունելով` Կիևյան Ռուսիան մաս կազմեց եվրոպական քաղաքակրթությանը:
զ) Միջնադարյան քաղաքների տնտեսական հիմքը արհեստներն էին:
է) Հնդկական թվային համակարգի մեջ «0» նշանը ներմուծել են հայերը:

1) ա, բ, գ, է
2) բ, գ, ե, զ
3) ա, գ, ե, զ
4) բ, ե, զ, է

**69** **Նշված պայմաններից ընտրել չորսը, որոնք տեղ են գտել 1815 թ. հունիսին կնքված Վիեննայի պայմանագրում.**

ա) Ռուսաստանին էին անցնում Լեհաստանի մի մասը և Ֆինլանդիան:
բ) Անգլիային էին անցնում Մալթա կղզին և հոլանդական մի շարք գաղութներ:
գ) Ֆրանսիան Պրուսիային էր զիջում Էլզասը և Լոթարինգիան:
դ) Ավստրիան տարածքներ էր ստանալու Լեհաստանից և Իտալիայից:
ե) Եվրոպական որոշ երկրներում պահպանվելու էր Նապոլեոն I-ի նշանակած գահակալների իշխանությունը:
զ) Ֆրանսիան պարտավորվում էր վճարել հսկայական ռազմատուգանք և հանձնել ռազմական նավատորմը:
է) Հանրապետական կարգը Եվրոպայում պահպանելու համար ստեղծվելու էր «Սրբազան դաշինքը»:

1) գ, ա, ե, զ
2) դ, գ, զ, է
3) ա, բ, գ, դ
4) ա, բ, դ, զ

**66** Կատարել համապատասխանեցում.

| N | Իրադարձությունը | N | Վայրը | N | Տարեթիվը |
|---|---|---|---|---|---|
| 1) | Հյուսիսային պատերազմի խոշորագույն ճակատամարտը | 1) | Իպր | 1) | 1904 թ. |
| 2) | Անգլո-ֆրանսիական դաշինքի կնքումը | 2) | Կոմպիենյան անտառ | 2) | 1915 թ. |
| 3) | Զինադադարի ստորագրումը Անտանտի և Գերմանիայի միջև | 3) | Լոնդոն | 3) | 1709 թ. |
| 4) | Քիմիական զենքի առաջին կիրառումը պատերազմում | 4) | Պոլտավա | 4) | 1918 թ. |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 3 |
| 2 | 2 | 1 |
| 3 | 2 | 4 |
| 4 | 1 | 1 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 3 |
| 2 | 3 | 1 |
| 3 | 2 | 4 |
| 4 | 1 | 2 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 3 |
| 2 | 3 | 3 |
| 3 | 1 | 4 |
| 4 | 1 | 2 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 3 |
| 2 | 3 | 1 |
| 3 | 2 | 4 |
| 4 | 1 | 4 |

**67** **Նշված դրույթներից ընտրել չորսը, որոնք համարվում են ՄԱԿ-ի գլխավոր սկզբունքները.**

ա) ինքնորոշումը և միջազգային համագործակցությունը
բ) մարդու իրավունքների և հիմնական ազատությունների իրականացումը բոլորի համար
գ) միջազգային վեճերը ռազմական ճանապարհով լուծելը
դ) միջազգային գործերում ուժի և ուժի սպառնալիքի գործադրումը
ե) պետությունների ներքին գործերին չմիջամտելը
զ) միջազգային վեճերը խաղաղ ճանապարհով լուծելը
է) մարդու իրավունքների և ազատությունների իրականացումը՝ հաշվի առնելով ռասայի, լեզվի, սեռի և կրոնի տարբերությունները

1) ա, բ, ե, զ
2) ա, գ, դ, է
3) բ, գ, դ, ե
4) գ, դ, ե, է





**ԹԵՄԱ 38. ԹՈՒՐՔԻԱՆ 1918-1939 ԹԹ.**

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ: Օսմանյան կայսրության կործանումը: Երիտթուրքերի պարագլուխների դատավարությունը, երիտթուրքական հանցագործների պատիժը հայ վրիժառուների կողմից: Քեմալական շարժումը. Մուստաֆա Քեմալ: Հանրապետության հռչակումը:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ: 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը: Լոզանի պայմանագիրը: Արտաքին քաղաքականությունը 1930-ական թվականներին:

**ԹԵՄԱ 39. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1930-ԱԿԱՆ ԹԹ.**

Վերսալ-վաշինգտոնյան համակարգի փլուզումը: Հակադիր խմբավորումների ձևավորումը: Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի ագրեսիվ գործողությունները: Ագրեսորներին «խաղաղեցնելու» քաղաքականությունը. Մյունխենի համաձայնագիրը: 1939 թ. խորհրդա-գերմանական պայմանագիրը:

**ԲԱԺԻՆ ԺԳ. ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1939-1945 ԹԹ.)**

**ԹԵՄԱ 40. ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՍԿԻԶԲԸ: ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ**

ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՍԿԻԶԲԸ: Պատերազմի պատճառներն ու սկիզբը: Լեհաստանի գրավումը: Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի, Մերձբալթիկայի, Բեսարաբիայի, Հյուսիսային Բուկովինայի բռնակցումը Խորհրդային Միությանը:

ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ (1939-1941 ԹԹ.): Իրադարձությունները Արևմտյան Եվրոպայում («տարօրինակ պատերազմ»): Ֆրանսիայի անձնատուր լինելը. Դիմադրական շարժումը Ֆրանսիայում («Ազատ Ֆրանսիա»): Անգլիան՝ գերմանական հարձակման վտանգի առջև: Ցամաքային Եվրոպայի նվաճումը:

**ԹԵՄԱ 41. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ**

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ: Գերմանիայի հարձակումը Խորհրդային Միության վրա: Ռազմական գործողությունները արևելյան ճակատում. Մոսկվայի, Ստալինգրադի, Կուրսկի ճակատամարտերը: Շրջադարձը պատերազմում:

ՀԱԿԱՀԻՏԼԵՐՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՆ: ԱՄՆ-ի՝ պատերազմի մեջ մտնելը: Հակահիտլերյան կոալիցիան և Միացյալ ազգերի հռչակագիրը: Թեհրանի խորհրդաժողովը: Երկրորդ ճակատի բացումը: Յալթայի խորհրդաժողովը:

ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ: Բեռլինի գրավումը. Գերմա-

նիայի անձնատուր լինելը: Պոտսդամի խորհրդաժողովը: Հայկական հարցի արծարծումը Պոտսդամում: Ճապոնիայի պարտությունը և պատերազմի ռազմաքաղաքական արդյունքները:

## ԲԱԺԻՆ ԺԴ. ԱՇԽԱՐՀԸ 1945-2000 ԹԹ.

### ԹԵՄԱ 42. ԱՇԽԱՐՀԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ: ԵՐԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ՄԱԿ-ը և միջազգային հարաբերությունների նոր համակարգի ձևավորման սկիզբը: Հակասությունների սրումը նախկին դաշնակիցների միջև. «սառը պատերազմի» սկիզբը: Հակադիր ռազմաքաղաքական խմբավորումների ձևավորումը. ՆԱՏՕ և Վարշավայի պայմանագիր:

### ԹԵՄԱ 43. ԽՍՀՄ-Ը 1953-1991 ԹԹ.: ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈՒԼՈՒՄ

ԽՍՀՄ-Ը 1953-1980-ԱԿԱՆ ԹԹ.: Ստալինի մահը: «Ձնհալը» և խրուշչովյան բարեփոխումները:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԻ ԽՈՐԱՑՈՒՄԸ ԵՐԿՐՈՒՄ: Մ. Գորբաչովը և վերակառուցման կուրսը: Քաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամը:

ԽՍՀՄ-Ի ՓԼՈՒԶՈՒՄԸ: ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԸ 1991-2000 ԹԹ.: ԽՍՀՄ-ի փլուզումը: Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) ստեղծումը: Համագործակցության ուղիների որոնումներ: Հայաստանը և ԱՊՀ երկրները:

### ԹԵՄԱ 44. ԳԵՐՄԱՆԻԱՆ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԱՍՆԱՏՈՒՄԸ ԵՎ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ: Չորս օկուպացիոն գոտիների ստեղծումը Գերմանիայում: ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի կազմավորումը:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄԸ: Քաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամը ԳԴՀ-ում և Գերմանիայի վերամիավորման խնդիրը. Բեռլինի պատի անկումը: Գերմանիայի վերամիավորումը:

### ԹԵՄԱ 45. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1978-1979 թթ. հեղափոխությունը և Իրանի Իսլամական Հանրապետության հռչակումը: Իրանա-իրաքյան պատերազմը: Իրանը 1990-ական թթ.: Հայաստան-Իրան միջպետական հարաբերությունները:

### ԹԵՄԱ 46. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ XX ԴԱՐՈՒՄ: Արվեստը և գրականությունը: Մշակույթի հասարակական դերը. սոցիալիստական մշակույթ, արևմտյան մշակույթ: Մշակույթի զարգացման նոր միտումները XXI դարի շեմին:





**62** **Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Անգլիայի և Ֆրանսիայի կողմից Գերմանիային պատերազմ հայտարարելը
2) ԽՍՀՄ-ի վտարվելը Ազգերի լիգայից
3) Եթովպիայի գրավումը ֆաշիստական Իտալիայի կողմից
4) Գերմանական զորքերի կողմից Դանիայի և Նորվեգիայի գրավումը

**63** **Հին Հունաստանի ո՞ր նշանավոր փիլիսոփան է հետևյալ արտահայտության հեղինակը.**

«Պլատոնն ընկերս է, բայց ճշմարտությունն ավելի թանկ է»:

1) Սոկրատեսը
2) Թալես Միլեթացին
3) Հերակլիտը
4) Արիստոտելը

**64** **Ո՞վ է հետևյալ արտահայտության հեղինակը.**

«Դարաշրջանի մեծ հարցերը վճռվում են ոչ թե ճառերով և մեծամասնության քվեարկությամբ, այլ երկաթով և արյամբ»:

1) Վիկտոր-Էմանուել II-ը
2) Նապոլեոն Բոնապարտը
3) Թոմաս Ջեֆերսոնը
4) Օտտո Բիսմարկը

**65** **Համապատասխանեցնել զորավարների անունները ճակատամարտերի հետ.**

| | |
|---|---|
| 1) Մագնեսիայի | ա) Սցիպիոն |
| 2) Խառանի | բ) Քլոդվիգ |
| 3) Պուատիեի | գ) Մարկոս Կրասոս |
| 4) Քերոնեայի | դ) Կառլոս Մարտել |
| 5) Սուասոնի | ե) Միհրդատ Եվպատոր |
| | զ) Հուլիոս Կեսար |

1) 1-ա, 2-գ, 3-դ, 4-ե, 5-բ
2) 1-գ, 2-բ, 3-ե, 4-ա, 5-գ
3) 1-գ, 2-ա, 3-բ, 4-գ, 5-դ
4) 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-բ

**59** **Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնց պատճառով ֆաշիստական Գերմանիան պատերազմ սկսեց ԽՍՀՄ-ի դեմ.**

ա) կանխել ԽՍՀՄ-ի ագրեսիան Ճապոնիայի դեմ Հեռավոր Արևելքում
բ) լուծել իր համար կենսական տարածք ապահովելու խնդիրը
գ) դուրս գալ քաղաքական մեկուսացումից և ամրապնդել իր դիրքերը
դ) մահացու հարված հասցնել իր գաղափարական հակառակորդին` կոմունիզմին
ե) վերացնել Խորհրդային Միությունը որպես պետություն
զ) ձախողել ԽՍՀՄ-ԱՄՆ-Ֆրանսիա-Անգլիա հնարավոր մերձեցումը

1) ա, դ, զ
2) գ, ե, զ
3) բ, դ, ե
4) ա, գ, դ

**60** **Պետությունները դասավորել դրանց առաջացման ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Աքեմենյան Պարսկաստան
բ) Ասորեստանի աշխարհակալ տերություն
գ) Հին Բաբելոնի թագավորություն
դ) Ալեքսանդր Մակեդոնացու տերություն
ե) Եգիպտոսի Նոր թագավորություն

1) ա, գ, բ, ե, դ
2) գ, ե, բ, ա, դ
3) բ, դ, ե, ա, գ
4) ե, ա, դ, գ, բ

**61** **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Գերմանիայի անձնատուր լինելը Առաջին աշխարհամարտում
բ) Հռոմի` Իտալիայի մայրաքաղաք դառնալը
գ) Արևելյան հարցի` միջազգային դիվանագիտության խնդիր դառնալը
դ) Երրորդ հանրապետության հռչակումը Ֆրանսիայում
ե) Հունաստանի անկախության ճանաչումը

1) գ, ե, բ, դ, ա
2) ե, դ, բ, գ, ա
3) բ, ա, գ, դ, ե
4) դ, գ, ա, ե, բ





## ԹԵՍՏԻ ԹԵՄԱՏԻԿ-ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ

Թեմատիկ-բովանդակային առումով թեստի Ա և Բ մակարդակների առաջադրանքները ոչ բոլոր դեպքերում են կազմվել նույն սկզբունքով:

Ուղեցույցում ներկայացված թեստի նմուշներում Ա մակարդակի 50 առաջադրանքները ժամանակագրական առումով բաշխվել են համամասնորեն: Դրանցում ներառվել են համաշխարհային պատմության հին, միջին, նոր և նորագույն շրջանների վերաբերյալ գրեթե նույն թվով հարցեր: Միաժամանակ դրանցում, որպես կանոն, արտացոլվել են «Համաշխարհային պատմության» ուղեցույցի բովանդակային դասիչի բոլոր թեմաները: Առաջադրանքներում տեղ են գտել համաշխարհային պատմության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքի և մշակույթի վերաբերյալ բազմաբնույթ հարցեր:

Չնայած Բ մակարդակի առաջադրանքները կազմելիս նույնպես պահպանվել է ժամանակագրական ու բովանդակային որոշակի համամասնություն, այդուհանդերձ, նկատի ունենալով այդ մակարդակի առաջադրանքների առանձնահատկությունները և թվով ավելի քիչ լինելը, պարտադիր չի համարվել, որ դրանք արտացոլեն բովանդակային դասիչում ընդգրկված բոլոր թեմաները:

# ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միասնական քննության թեստի բոլոր 80 առաջադրանքները կազմված են ճիշտ պատասխանն ընտրելու սկզբունքով, այսինքն՝ տրված չորս պատասխաններից միայն մեկն է ճիշտ: Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1, սխալ պատասխանը կամ պատասխանի բացակայությունը՝ 0 միավոր: Առաջադրանքի կատարումը ճիշտ է համարվում, եթե քննություն հանձնողն ընտրում է ճիշտ պատասխանը: Այսինքն՝ 80 առաջադրանքներին տրվող միավորների ընդհանուր գումարը կազմում է 80:

Առաջադրանքների պահանջները հիմնականում ձևակերպվում են հարցերի (ա) կամ հանձնարարությունների (բ) ձևով, օրինակ՝

ա) Ե՞րբ է ստեղծվել Առաջին եռապետությունը Հռոմում:

բ) Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

Առաջին թեստի առաջադրանքների հիման վրա հարկ ենք համարում բացատրություններ տալ դրանց կատարման վերաբերյալ:





**57** **Նշվածներից որո՞նք են Հուստինիանոսի մղած պատերազմների հետևանքները.**

ա) Ամրապնդվեցին Բյուզանդիայի դիրքերը Միջերկրական ծովի գրեթե ողջ ավազանում:
բ) Նվաճվեց Օստգոթական Իտալիան:
գ) Հռոմեական կայսրության արևելյան տարածքները նվաճեցին բարբարոսները:
դ) Նվաճվեց Վանդալա-ալանական թագավորությունը:
ե) Վերականգնվեց Հռոմեական կայսրությունն իր առավելագույն հզորության ժամանակաշրջանի սահմաններում:
զ) Նվաճվեց Սասանյան Պարսկաստանը:

1) ա, բ, ե
2) բ, գ, դ
3) բ, դ, զ
4) ա, բ, դ

**58** **Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք 1640-1660 թթ. անգլիական բուրժուական հեղափոխության պատճառ են հանդիսանում.**

ա) կապիտալիզմի զարգացման ավելի բարձր տեմպերը Անգլիայում
բ) 1639-1640 թթ. սովը և գյուղացիական ապստամբությունները
գ) թագավորական իշխանության, արտոնյալ ազնվականության և անգլիկան եկեղեցու ավատատիրական կարգերը պահպանելու քաղաքականությունը
դ) հակասությունների սրումը անգլիական պառլամենտի և թագավորական իշխանության միջև
ե) երրորդ դասի կողմից Ազգային ժողովի ստեղծումը
զ) հակասությունների սրումը Անգլիայի և Ռուսաստանի միջև

1) ա, գ, դ
2) բ, գ, ե
3) գ, դ, ե
4) գ, դ, զ

**55** Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1) ապրանք
2) կապիտալ
3) բիրժա
4) մակլեր

ա) միջնորդ, որի օգնությամբ բանկիրները, նրանց գործակալները, առևտրականները կնքում էին տնտեսական գործարքներ
բ) վաճառքի համար նախատեսված արտադրանք
գ) շահույթ բերող հարստություն
դ) առևտրա-տնտեսական գործարքներ կնքելու վայր
ե) ֆինանսավորում իրականացնող անձ

1) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ե
3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
4) 1-ե, 2-ա, 3-դ, 4-գ

**56** Հասկացությունները համապատասխանեցնել իրենց նշանակությանը.

1) հրապարակայնություն
2) «սառը պատերազմ»
3) շուկայական տնտեսություն
4) ինտեգրացում

ա) տնտեսական կյանքի միջազգայնացման նոր, բարձրագույն ձև
բ) կարգախոս՝ առաջ քաշված ԽՍՀՄ-ում վերակառուցման տարիներին
գ) աշխարհի ամենահզոր տերությունների միջև առճակատման և միմյանց նկատմամբ սպառնալիքների քաղաքականություն
դ) քաղաքական առաջնորդների և կուսակցությունների հեղինակության թվային ցուցանիշ
ե) տնտեսություն, որը զարգանում է ապրանքային տնտեսության պահանջարկի և առաջարկի օրենքների հիման վրա

1) 1-բ, 2-դ, 3-ա, 4-ե
2) 1-բ, 2-գ, 3-ե, 4-ա
3) 1-բ, 2-դ, 3-ե, 4-գ
4) 1-ա, 2-ե, 3-գ, 4-դ





## Ա մակարդակ (50 առաջադրանք)

- **Տարեթվերի իմացություն**

Բոլոր 12 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ ե՞րբ է տեղի ունեցել Մարաթոնի ճակատամարտը:

Տրված է պատասխանի չորս տարբերակ, որոնցից շրջանավարտը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:

- **Փաստերի և երևույթների իմացություն**

Բոլոր 14 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ ո՞վ է ԱՄՆ-ի «Անկախության հռչակագրի» հեղինակը:

Տրված է պատասխանի չորս տարբերակ, որոնցից շրջանավարտը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:

- **Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն**

Տրված 2 առաջադրանքների պահանջները հիմնականում ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ ո՞րն է «ինդուլգենցիա» բառի բացատրությունը:

Տրված է պատասխանի չորս տարբերակ, որոնցից շրջանավարտը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:

- **Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն**

Տրված 4 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ ի՞նչ նշանակություն ունեցավ Մոսկվայի ճակատամարտը:

Տրված է պատասխանի չորս տարբերակ, որոնցից շրջանավարտը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:

- **Փաստերի հաջորդական դասավորություն**

Տրված 9 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ՝ պատմական գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հաջորդականության:

Ներկայացված է գործիչների անվանացանկ և առաջարկված է պատասխանների չորս տարբերակ, որոնցից շրջանավարտը ընտրում է միակ ճիշտ պատասխանը: Այս տիպի Ա մակարդակի առաջադրանքներում անունների և իրադարձությունների շարքը երկար չէ և սահմանափակվում է 4-5 անուններով կամ դեպքերով:

- **Աշխատանք սկզբնաղբյուրների հետ**

Տրված 4 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ ո՞ր պատմիչի աշխատությունից է վերցված նշված հատվածը:

Առաջադրանքում բերվում են պատմիչի խոսքերը, որից հետո առաջարկվում է պատասխանի չորս տարբերակ: Դրանցից շրջանավարտը պետք է ընտրի միակ ճիշտ անունը:

- **Համապատասխանեցում**

Տրված 5 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ՝ պատմական իրադարձությունը համապատասխանեցնել տարեթվի հետ:

Առաջադրանքի ձևակերպումից հետո տրված են չորս իրադարձություններից և հնարավոր հինգ տարեթվերից կազմված շարքեր (կարող էր լինել նաև հակառակ տարբերակը): Շրջանավարտը կարող է, օրինակ, սկզբում գտնել երկրորդ շարքում եղած ավելորդ տարեթիվը և այն բացառելով՝ կազմել չորս ճիշտ զույգերից կազմված շարք: Առաջադրանքի վերջում տրված է հնարավոր պատասխանի չորս տարբերակ: Իր ստացած պատասխանը համեմատելով դրանց հետ՝ շրջանավարտը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## Բ մակարդակ

**51** **Տրված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Իսլամի ընդունումը նպաստեց արաբական ցեղերի միավորմանը:
2) Կիևյան Ռուսիայի հիմնադիրն է իշխան Օլեգը:
3) Հոգևոր նվիրապետությունը կազմված էր տասնմեկ աստիճանից:
4) Ռիչարդ II Առյուծասիրտը մասնակցել է խաչակրաց երրորդ արշավանքին:

**52** **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) Ջուզեպպե Գարիբալդին դարձավ միավորված Իտալիայի առաջին թագավորը:
2) Եկատերինա II-ի օրոք Ռուսաստանը հաղթանակ տարավ «Յոթնամյա պատերազմում»:
3) Ավստրո-Հունգարիայում ստեղծվեց միասնական իշխանության բարձրագույն մարմին՝ ռայխստագ:
4) Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում ստեղծվեց երկիշխանություն:

**53** **Տրված պնդումներից ո՞րն է Ֆուլտոնում Ու. Չերչիլի հայտարարությունից.**

1) ԽՍՀՄ-ի դեմ անհրաժեշտ է ստեղծել դաշինք, նրա նկատմամբ վարել կոշտ քաղաքականություն, եթե հարկ լինի, կիրառել միջուկային զենքը:
2) Աշխարհը թևակոխել է կայուն խաղաղության ժամանակաշրջան, և բացառվում է երրորդ համաշխարհային պատերազմը:
3) Մեծ Բրիտանիան, որպես ԽՍՀՄ-ի դաշնակից, պատրաստ է նրան տրամադրել օգնություն՝ քայքայված տնտեսությունը վերականգնելու համար:
4) Աշխարհին սպառնում է երրորդ համաշխարհային պատերազմի վտանգը, որի աղբյուրն է Ֆրանսիան:

**54** **Նշվածներից ո՞րն է սքոլաստիկա տերմինի բացատրությունը.**

1) գիմնասիոն
2) ակադեմիա
3) միջնադարյան համալսարանական գիտություն
4) քոլեջ

**50** **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

| | |
|---|---|
| 1) գերմանական զորքերի ներխուժումը Ֆրանսիա | ա) 1939 թ. նոյեմբերի 30 |
| 2) խորհրդա-ֆիննական հաշտության պայմանագրի կնքումը | բ) 1939 թ. օգոստոսի 22 |
| 3) խորհրդային զորքերի մուտքը Լեհաստան | գ) 1940 թ. մարտի 12 |
| 4) Հիտլերի հայտարարությունը Օբերզալցբուրգում | դ) 1940 թ մայիսի 10 |
| | ե) 1939 թ. սեպտեմբերի 17 |

1) 1-դ, 2-գ, 3-ե, 4-բ
2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-ե
3) 1-ե, 2-ա, 3-բ, 4-գ
4) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա





## Բ մակարդակ (30 առաջադրանք)

Ի տարբերություն Ա մակարդակի, որտեղ առաջադրանքները պարզ հարցադրումներից ու պահանջներից աստիճանաբար բարդանում են և գերազանցապես պարզ և միջին բարդության հարցեր են, Բ մակարդակի առաջադրանքներն ավելի բարդ են և շրջանավարտից պահանջում են «Համաշխարհային պատմություն» առարկայի խոր իմացություն: Ճիշտ է, Բ մակարդակի առաջադրանքների մեծ մասը կազմված են նույն սկզբունքներով, որոնք հանդիպում ենք Ա մակարդակում, բայց դրանց պատասխանելու համար պահանջվում են ինչպես ավելի մեծ ծավալի գիտելիքներ, այնպես էլ դրանք համադրելու և տրամաբանելու կարողություն: Ընդ որում, որոշ տիպի առաջադրանքներ աստիճանաբար բարդանում են:

- **Պատմական փաստերի համադրում և խմբավորում**

Տրված 6 առաջադրանքների պահանջները ներկայացվում են հարցերի (ա) կամ հանձնարարությունների (բ) ձևով: Օրինակ՝

ա) Տրված պնդումներից ո՞րն է սխալ:

բ) Նշված պայմաններից առանձնացնել երեքը, որոնք տեղ են գտել 1807 թ. կնքված Տիլզիտի պայմանագրում:

Առաջին դեպքում բերվում են 4 պնդումներ, որոնցից շրջանավարտը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը: Ակնհայտ է, որ երկրորդ դեպքում առաջադրանքն ավելի բարդ է և պահանջում է գիտելիքները համադրելու կարողություն: Առաջադրանքում բերված յոթ պայմաններից շրջանավարտը պետք է առանձնացնի երեքը: Իր ընտրած կետերը նա պետք է համեմատի առաջադրանքի վերջում տրված պատասխանի չորս հնարավոր տարբերակների հետ և ընտրի միակ ճիշտ պատասխանը:

- **Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն**

Տրված 6 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ՝ տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:

Բոլոր դեպքերում բերված է չորս տերմին կամ հասկացություն և տրված է դրանց բովանդակության կամ նշանակության բացատրության հինգ տարբերակ: Շրջանավարտը նախ որոշում է չորս ճիշտ զույգերը՝ բացառելով բացատրության ավելորդ տարբերակը: Դրանից հետո նա իր ստացած պատասխանը համեմատում է առաջադրանքում առաջարկված պատասխանի չորս հնարավոր տարբերակների հետ և ընտրում միակ ճիշտ պատասխանը:

- **Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն**

Տրված 5 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ՝ բերված փաստարկներից ընտրել

երեքը, որոնք նպաստեցին Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի փլուզմանը:

Շրջանավարտը առաջադրանքում առաջարկված վեց փաստարկներից ընտրում է, իր կարծիքով, երեք ճիշտ պատասխանները: Այնուհետև դրանք համեմատում է առաջադրանքում առաջարկված պատասխանի չորս հնարավոր տարբերակների հետ և ընտրում միակ ճիշտ պատասխանը:

- **Դեպքերի հաջորդական դասավորություն**

Տրված 5 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ՝ պատմական գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության հաջորդականության:

Շրջանավարտից *(դիմորդից)* պահանջվում է գտնել հաջորդական ճիշտ դասավորությունը: Օգտագործելով տարբեր թեմաներից ունեցած իր գիտելիքները՝ շրջանավարտը նախ կազմում է շարքի իր տարբերակը: Դրանից հետո այն համեմատում է առաջադրանքում առաջարկված պատասխանի հնարավոր չորս տարբերակների հետ և ընտրում միակ ճիշտ պատասխանը:

- **Աշխատանք սկզբնաղբյուրների հետ.**

Տրված 4 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ ո՞վ է տվյալ արտահայտության հեղինակը:

Շրջանավարտը ծանոթանում է սկզբնաղբյուրից բերված հատվածին, ընտրում պատասխանը, այն համեմատում առաջադրանքում առաջարկված պատասխանի հնարավոր չորս տարբերակների հետ և ընտրում միակ ճիշտ պատասխանը:

- **Համապատասխանեցում**

Տրված 4 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ՝ կատարել համապատասխանեցում: Պատասխանները լրացնել առաջին սյունյակում տրված իրադարձությունների հերթականությամբ:

Առաջադրանքները նույնատիպ չեն և աստիճանաբար բարդանում են: Դրանցից մեկը (65) կազմված է Ա մակարդակի համանման առաջադրանքների սկզբունքով: Պարզապես Բ տարբերակում պատմական գործիչների շարքը չորսի փոխարեն կազմված է 5 գործիչների անուններից, իսկ նրանց զբաղեցրած պաշտոնների կամ պատմական իրադարձությունների շարքը համապատասխանաբար դարձել է 6: Ամեն դեպքում, այդ առաջադրանքների կատարման սկզբունքը նույնն է: Բացառելով երկրորդ շարքի ավելորդ կետը՝ շրջանավարտը նախ համապատասխանեցնում է մնացած զույգերը: Դրանից հետո ստացած պատասխանը նա համեմատում է առաջադրանքում տրված հնարավոր պատասխանի չորս տարբերակների հետ և ընտրում միակ ճիշտ պատասխանը:





**46** **Ո՞ր պատմիչի աշխատությունից է վերցված հետևյալ հատվածը.** «Ես ուզում էի ազատ լինել: Իմ ցանկությունն էր՝ ինքս ազատագրվել և իմ որդիներին ազատություն ժառանգել»:

1) Հերոդոտոսի
2) Պլուտարքոսի
3) Քսենոփոնի
4) Դիոն Կասիոսի

**47** **Ո՞ր քաղաքական գործիչն է հետևյալ խոսքերի հեղինակը.** «Դա ի՞նչ է, պատերազմի հայտարարությո՞ւն է»:

1) Մոլոտովը
2) Շուլենբուրգը
3) Ստալինը
4) Ռիբենտրոպը

**48** **Կատարել համապատասխանեցում.**

| | |
|---|---|
| 1) Մարդուկ | ա) Արևի սկավառակը, որի սպասավորներն էին մյուս աստվածները |
| 2) Աթոն | բ) ծովերի և ջրերի աստվածը |
| 3) Շամաշ | գ) գերագույն աստվածը Հին Եգիպտոսում |
| 4) Ամոն | դ) գերագույն աստվածը Հին Բաբելոնում |
| | ե) Արևի աստվածը Հին Բաբելոնում |

1) 1-ա, 2-ե, 3-բ, 4-դ
2) 1-դ, 2-ա, 3-ե, 4-գ
3) 1-ե, 2-դ, 3-բ, 4-ա
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե

**49** **Պատմական գործիչների անունները համապատասխանեցնել նրանց զբաղեցրած պաշտոնների հետ.**

| | |
|---|---|
| 1) Շառլ Մորիս Թալեյրան | ա) ոստիկանության նախարար |
| 2) Ժոզեֆ Ֆուշե | բ) պաշտպանության նախարար |
| 3) Մակ Մահոն | գ) Ֆրանսիայի նախագահ |
| 4) Մաքսիմիլիան Ռոբեսպիեր | դ) արտաքին գործերի նախարար |
| | ե) Յակոբինյան դիկտատուրայի ղեկավար |

1) 1-ա, 2-ե, 3-դ, 4-բ
2) 1-դ, 2-ա, 3-գ, 4-ե
3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
4) 1-գ, 2-բ, 3-ե, 4-գ

**43** **Պատմական նշանավոր դեմքերին դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հաջորդականության.**

ա) Սալահ ադ Դին
բ) Յարոսլավ Իմաստուն
գ) Հարուն ալ Ռաշիդ
դ) Կոստանդին VII Ծիրանածին
ե) Ֆիլիպ II Օգոստոս

1) գ, դ, բ, ա, ե
2) դ, ե, գ, ա, բ
3) ե, գ, բ, ա, դ
4) դ, բ, գ, ե, ա

**44** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Բորոդինոյի ճակատամարտը
բ) Բաստիլի գրավումը
գ) Երկարատև պառլամենտի ցրումը
դ) Յորքթաունի ճակատամարտը
ե) Ալյասկայի միացումը ԱՄՆ-ին

1) բ. ա, դ, գ, ե
2) գ, դ, բ, ա, ե
3) ա, գ, դ, բ, ե
4) դ, ա, ե, գ, բ

**45** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Վաշինգտոնի խորհրդաժողովի սկիզբը
բ) Տրիանոնի պայմանագրի կնքումը
գ) Նեյի պայմանագրի կնքումը
դ) Սեն Ժերմենի պայմանագրի կնքումը
ե) Փարիզի հաշտության խորհրդաժողովի բացումը

1) ե, դ, գ, բ, ա
2) դ, ե, բ, գ, ա
3) գ, ա, դ, բ, ե
4) ա, ե, գ, բ, դ





Մնացած երեք առաջադրանքները (66, 79-80) աստիճանաբար բարդացող աղյուսակներ են: Դրանց պատասխանելը շրջանավարտից պահանջում է միաժամանակ ավելի մեծ ծավալի փաստեր համադրելու կարողություն և հմտություն: Դրանք կարող են լինել, օրինակ, իրադարձությունների, տարեթվերի և պատմական գործիչների (կամ տեղանունների) շարքեր, կամ իրադարձությունների, վայրերի և տարեթվերի շարքեր:

66 և 79 առաջադրանքներին պատասխանելու համար առաջարկվում է հետևյալ սկզբունքը: Քննություն հանձնողը ըստ առաջին շարքի հերթականության կազմում է իր կարծիքով չորս ճիշտ եռյակները: Դրանից հետո իր ստացած աղյուսակը նա համեմատում է առաջադրանքում տրված հնարավոր պատասխանի չորս տարբերակների հետ և ընտրում միակ ճիշտ պատասխանը:

80 առաջադրանքն ավելի բարդ է: Այն չորս շարք պարունակող աղյուսակ է: Առաջադրանքին պատասխանելու սկզբունքը նույնն է, ինչ նախորդներինը: Ըստ աղյուսակի առաջին շարքի հերթականության, շրջանավարտը պետք է կազմի համապատասխանեցված չորս քառյակներ, ստացված աղյուսակը համեմատի առաջադրանքում որպես հնարավոր ճիշտ պատասխաններ տրված աղյուսակների չորս տարբերակների հետ և ընտրի միակ ճիշտ պատասխանը:

# ԹԵՍՏ 1

## Ա մակարդակ

**1** Ե՞րբ է կործանվել Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն.

1) Ք. ա. 712 թ.
2) Ք. ա. 612 թ.
3) Ք. ա. 585 թ.
4) Ք. ա. 550 թ.

**2** Ե՞րբ է թագավորել Բաբելոնի Համմուրապի արքան.

1) Ք. ա. 2330-2295 թթ.
2) Ք. ա. 1792-1750 թթ.
3) Ք. ա. 1685-1645 թթ.
4) Ք. ա. 1279-1213 թթ.

**3** Ե՞րբ են խաչակիրները գրավել Երուսաղեմը.

1) 1171 թ.
2) 1187 թ.
3) 1099 թ.
4) 1192 թ.

**4** Ե՞րբ է բացվել Վիեննայի վեհաժողովը.

1) 1813 թ. հոկտեմբերին
2) 1814 թ. նոյեմբերին
3) 1815 թ. հունիսին
4) 1821 թ. մարտին

**5** Ե՞րբ է սկսվել Առաջին համաշխարհային պատերազմը.

1) 1914 թ. օգոստոսի 1-ին
2) 1915 թ. հուլիսի 1-ին
3) 1917 թ. փետրվարի 25-ին
4) 1917 թ. հուլիսի 3-ին

**6** Ե՞րբ է բացվել Փարիզի հաշտության խորհրդաժողովը.

1) 1918 թ. հոկտեմբերի 30-ին
2) 1919 թ. հունվարի 18-ին
3) 1919 թ. հունիսի 28-ին
4) 1920 թ. նոյեմբերի 18-ին



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**39** Նշված պնդումներից որո՞նք են սխալ.

ա) Անգլիայում թագավորի կողմնակիցներին անվանում էին «կլորագլուխներ»:
բ) Օնորե Միրաբոն եղել է Ֆրանսիայում հանրապետության կողմնակից:
գ) XVIII դարի նշանավոր լուսավորականներից էին Շառլ Մոնտեսքյոն, Վոլտերը, Ժան Ժակ Ռուսոն, Դենի Դիդրոն:
դ) 1783 թ. Վերսալի պայմանագրով ճանաչվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներ պետությունը:
ե) 1891-1893 թթ. բանակցությունների արդյունքում Ֆրանսիայի և Անգլիայի միջև կնքվեց ռազմա-քաղաքական դաշինք:

1) ա, բ, ե
2) ա, գ, դ
3) ա, բ, գ
4) ա, դ, ե

**40** Ի՞նչ անունով է հայտնի 1936 թ. հոկտեմբերին Գերմանիայի և Իտալիայի միջև կնքված պայմանագիրը.

1) Հակակոմինտերնական պակտ
2) Մյունխենյան գործարք
3) Բեռլին-Հռոմ առանցք
4) Ատլանտյան խարտիա

**41** Ո՞ր իրադարձությունը նպաստեց, որ Հռոմը վերածվի միջերկրածովյան ամենաուժեղ պետության.

1) Գայոս Մարիուսի ռեֆորմները
2) Սպարտակի ապստամբության ճնշումը
3) գալլերի վերջնական հպատակեցումը
4) հաղթանակը Կարթագենի նկատմամբ II Պունիկյան պատերազմում:

**42** Ի՞նչ հետևանք ունեցավ Ռուսաստանի համար Իվան IV Ահեղի կողմից իրականացված օպրիչնինայի քաղաքականությունը.

1) Ռուսաստանը հաղթեց Լիվոնյան պատերազմում:
2) Կանխվեց Ղրիմի խանի արշավանքը Մոսկվա:
3) Վատթարացավ Ռուսաստանի տնտեսական և քաղաքական դրությունը:
4) Երկրի տնտեսությունը ծաղկում ապրեց:

36 Ո՞ր իրադարձությունը հարկադրեց Չեխոսլովակիայի կառավարությանը հանդես գալ հետևյալ հայտարարությամբ. «Մենք ենթարկվում ենք Մյունխենում առանց մեզ և ընդդեմ մեզ ընդունված որոշումներին» :

1) Սուդեթական մարզը Գերմանիային հանձնելը
2) Գերմանական զորքերի մուտքը Հռենոսի ապառազմականացված գոտի
3) Գերմանիայի և Իտալիայի ռազմական ինտերվենցիան Իսպանիայի Հանրապետության դեմ
4) Ավստրիայի անշլյուսը (միացումը)

37 Գիտության և մշակույթի ո՞ր բնագավառներն են ներկայացնում ստորև նշված գործիչները: Կատարել համապատասխանեցում.

| | |
|---|---|
| 1) Ֆիդիաս | ա) ողբերգություն |
| 2) Տակիտոս | բ) ճարտարապետություն |
| 3) Վերգիլիոս | գ) աշխարհագրություն |
| 4) Պտղոմեոս | դ) գրականություն |
| | ե) պատմություն |

1) 1-ե, 2-ա, 3-գ, 4-բ
2) 1-բ, 2-ե, 3-դ, 4-գ
3) 1-դ, 2-ա, 3-բ, 4-ե
4) 1-գ, 2-բ, 3-ե, 4-ա

38 Համապատասխանեցնել պատմական իրադարձությունները տարեթվերի հետ.

| | |
|---|---|
| 1) Օսմանյան պետության հիմնադրումը | ա) 1552 թ. |
| 2) Ֆերնան Մագելանի շուրջերկրյա ճանապարհորդության սկիզբը | բ) 1519 թ. |
| 3) Կազանի գրավումը Իվան Ահեղի կողմից | գ) 1613 թ. |
| 4) Ոսկե Հորդայի լծի տապալումը Ռուսաստանում | դ) 1480 թ. |
| | ե) 1299 թ. |

1) 1-ե, 2-բ, 3-ա, 4-դ
2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
3) 1-դ, 2-ա, 3-ե, 4-գ
4) 1-ա, 2-դ, 3-բ, 4-ե



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

7 Ե՞րբ է ստորագրվել Վարշավայի պայմանագիրը.

1) 1949 թ. ապրիլի 4-ին
2) 1953 թ. մարտի 5-ին
3) 1955 թ. մայիսի 14-ին
4) 1969 թ. հուլիսի 20-ին

8 Ո՞ր փարավոնը փորձեց սահմանափակել Ամոնի տաճարի քրմության իշխանությունը.

1) Յահմոս I-ը
2) Ռամզես II-ը
3) Ամենհոտեպ IV-ը (Էխնաթոն)
4) Սենուսերթ III-ը

9 Ինչպե՞ս էին անվանում Հին Հռոմում իրար դեմ կռվելու համար հատուկ վարժեցված ստրուկներին.

1) նոբիլ
2) դիկտատոր
3) իմպերատոր
4) գլադիատոր

10 Ո՞վ վերջ դրեց Մերովինգների արքայատոհմին և հաստատեց Կարոլինգների արքայատոհմը ֆրանկների պետությունում.

1) Կառլոս Մարտելը
2) Կառլոս Մեծը
3) Լյուդովիկոս Բարեպաշտը
4) Պիպին Կարճահասակը

11 Ո՞վ է ԱՄՆ-ի «Անկախության հռչակագրի» հեղինակը.

1) Թեոդոր Ռուզվելտը
2) Աբրահամ Լինկոլնը
3) Թոմաս Ջեֆերսոնը
4) Ջոն Բրաունը

12 Ո՞ր պայմանագրով ավարտվեց ռուս-շվեդական Հյուսիսային պատերազմը.

1) Գրենգամի
2) Գանգուտի
3) Նիշտադտի
4) Պոլտավայի

**13** **Ինչպե՞ս էր կոչվում ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու Գերմանիայի ռազմական պլանը.**

1) «Բլիցկրիգ»
2) «Բարբարոսա»
3) «Դեղին պլան»
4) «Ծովային առյուծ»

**14** **Ո՞վ էր Ռուսաստանի Դաշնության առաջին նախագահը.**

1) Վլադիմիր Պուտինը
2) Միխայիլ Գորբաչովը
3) Բորիս Ելցինը
4) Լեոնիդ Բրեժնևը

**15** **Ո՞րն է հունարեն «տրագեդիա» բառի հայերեն համարժեքը.**

1) թատրոն
2) ողբերգություն
3) կատակերգություն
4) տոնահանդես

**16** **Նշվածներից ո՞րն է «մանդատ» տերմինի բացատրությունը.**

1) փոփոխություն, կատարելագործում
2) արդի աշխարհի համակարգված միասնականացում
3) կառավարման ձև
4) պատերազմում պարտված երկրի կողմից կատարվող դրամական վճարում հաղթող երկրին

**17** **Աթենական պետության մեջ կատարված բարեփոխումների հեղինակներին դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հաջորդականության.**

ա) Կլիսթենես
բ) Դրակոն
գ) Պիսիստրատ
դ) Սոլոն

1) բ, դ, գ, ա
2) ա, դ, գ, բ
3) դ, ա, բ, գ
4) գ, ա, դ, բ





**33** **Պատմական գործիչներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Ռիչարդ Առյուծասիրտ
բ) Ուրբանոս II
գ) Ստեֆան Դուշան
դ) Լյուդովիկոս XI

1) բ, ա, դ, գ
2) բ, ա, գ, դ
3) ա, գ, դ, բ
4) դ, գ, ա, բ

**34** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Կիևի ազատագրումը Կարմիր բանակի կողմից
բ) Պիրլ Հարբորի ռազմածովային հենակայանի ռմբակոծումը ճապոնիայի կողմից
գ) Ստալինի նախագահությամբ Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը
դ) Բեռլինի գրավումը Կարմիր բանակի կողմից

1) բ, գ, ա, դ
2) գ, բ, ա, դ
3) ա, բ, դ, գ
4) գ, ա, դ, բ

**35** **Ո՞ր արքան է սահմանել գահաժառանգության հետևյալ կարգը.**

«Թող արքա դառնա միայն արքայի որդիներից առաջինը: Եթե արքայի որդիներից առաջինը չկա, ապա թող արքա դառնա նա, ով երկրորդն է: Իսկ եթե արքայի որդիներից ոչ մեկը չկա, ապա թող արքա դառնա նա, ով կնության կվերցնի արքայի առաջին դստերը»:

1) Թիգլաթպալասար III-ը
2) Համմուրապին
3) Տելեպինուսը
4) Դարեհ I-ը

**28** Նշված կտավներից ո՞րն է Ռաֆայելի ստեղծագործությունը.

1) «Սիքստինյան տիրամայրը»
2) «Մոնա Լիզան»
3) «Վեներայի ծնունդը»
4) «Խորհրդավոր ընթրիքը»

**29** Ո՞վ էր ԱՄՆ առաջին նախագահը.

1) Ջորջ Վաշինգտոնը
2) Ֆրանկլին Ռուզվելտը
3) Վուդրո Վիլսոնը
4) Լինդոն Ջոնսոնը

**30** Ո՞վ էր միավորված Գերմանիայի առաջին կանցլերը.

1) Հելմուտ Կոլը
2) Էրիկ Հոնեկերը
3) Գերհարդ Շրյոդերը
4) Հելմուտ Շմիդտը

**31** Ինչո՞ւ Միխայիլ Կուտուզովը Մոսկվան հանձնեց ֆրանսիացիներին.

1) Կուտուզովն այդ քայլին դիմեց կայսր Ալեքսանդր I-ի խորհրդով:
2) Ժամանակ շահելու և բանակը համալրելու նպատակով:
3) Ֆրանսիացիներին դիմադրելը համարում էր այլևս անիմաստ:
4) Պետերբուրգը պաշտպանելու և հակահարձակման անցնելու նպատակով:

**32** Ի՞նչ նշանակություն ունեցավ Մոսկվայի ճակատամարտը.

1) Երկրորդ համաշխարհային պատերազմում արմատական բեկման սկիզբը դրվեց:
2) Ձախողվեց Գերմանիայի «Կայծակնային պատերազմի» պլանը:
3) Բացվեց երկրորդ ճակատը:
4) Իտալիան դուրս եկավ պատերազմից:





**18** Տրված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) խաչակիրների առաջին արշավանքը
բ) քրիստոնեության ընդունումը Հին Ռուսիայում
գ) իսլամի առաջացումը
դ) Հայկական արքայատոհմի հաստատումը Բյուզանդիայում

1) դ, բ, գ, ա
2) գ, դ, բ, ա
3) գ, բ, դ, ա
4) դ, գ, բ, ա

**19** Իրավական փաստաթղթերը դասավորել ըստ դրանց ընդունման հաջորդականության.

ա) «Քաղաքացիական օրենսգիրքը» Ֆրանսիայում
բ) «Հոմսթեդների մասին օրենքը» ԱՄՆ-ում
գ) «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը» Ֆրանսիայում
դ) «Հաբեաս կորպուս ակտը» Անգլիայում

1) դ, գ, ա, բ
2) ա, բ, դ, գ
3) բ, դ, ա, գ
4) գ, դ, բ, ա

**20** Պայմանագրերը դասավորել ըստ դրանց կնքման ժամանակագրական հաջորդականության.

ա) Մոսկվայի
բ) Լոզանի
գ) Կարսի
դ) Սևրի

1) գ, դ, ա, բ
2) բ, գ, դ, ա
3) դ, ա, գ, բ
4) ա, գ, բ, դ

**21** Ե՞րբ է կառուցվել Հռոմի Կոլիզեյ ամֆիթատրոնը.

1) Ք. հ. 80 թ.
2) Ք. հ. 60 թ.
3) Ք. հ. 70 թ.
4) Ք. ա. 74 թ.

22 Ե՞րբ է տեղի ունեցել Հռոմի գրավումը վանդալների կողմից:

1) 451 թ.
2) 476 թ.
3) 410 թ.
4) 455 թ.

23 Ե՞րբ է թագադրվել Իվան IV-ը.

1) 1533 թ.
2) 1550 թ.
3) 1552 թ.
4) 1547 թ.

24 Ե՞րբ է Ազգային կոնվենտը Ֆրանսիան հռչակել հանրապետություն.

1) 1789 թ. հուլիսի 14-ին
2) 1792 թ. սեպտեմբերի 22-ին
3) 1793 թ. հունվարի 21-ին
4) 1794 թ. հուլիսի 27-ին

25 Ե՞րբ է Գերմանիան հռչակվել հանրապետություն.

1) 1919 թ. հունվարին
2) 1918 թ. նոյեմբերին
3) 1923 թ. նոյեմբերին
4) 1917 թ. հոկտեմբերին

26 Ո՞ր վայրում է տեղի ունեցել Ալեքսանդր Մակեդոնացու և Դարեհ III-ի բանակների միջև վճռական ճակատամարտը.

1) Մագնեսիայում
2) Գրանիկոսում
3) Գավգամելայում
4) Իպսոսում

27 Ո՞ւմ հրամանով է ստեղծվել «Սալիական դատաստանագիրքը».

1) Օդոակրի
2) Թեոդորիքի
3) Քլոդվիգի
4) Հուստինիանոս I-ի



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

22 Ե՞րբ սկսվեց չքավորների արշավանքը Երուսաղեմը «անհավատներից» ազատագրելու համար.

1) 1054 թ.
2) 1096 թ.
3) 1119 թ.
4) 1080 թ.

23 Ե՞րբ մահապատժի ենթարկեցին Ժաննա դ' Արկին.

1) 1415 թ.
2) 1453 թ.
3) 1360 թ.
4) 1431 թ.

24 Ե՞րբ է տեղի ունեցել ռուս-թուրքական ճակատամարտը Սինոպի ծովախորշում.

1) 1805 թ.
2) 1877 թ.
3) 1853 թ.
4) 1825 թ.

25 Ե՞րբ է հռչակվել Իրանի Իսլամական Հանրապետությունը.

1) 1979 թ. ապրիլի 1-ին
2) 1987 թ. հունվարի 9-ին
3) 1981 թ. փետրվարի 4-ին
4) 1989 թ. հունիսի 3-ին

26 Հունական ո՞ր աստվածությանը նվիրված ծիսակատարություններից է առաջացել թատրոնը.

1) Զևսի
2) Աթենասի
3) Դիոնիսոսի
4) Հեփեստոսի

27 Ի՞նչ անունով է հայտնի Կատալաունյան դաշտում տեղի ունեցած ճակատամարտը.

1) Ազգերի ճակատամարտ
2) Բարբարոսների ճակատամարտ
3) Արյունալի ճակատամարտ
4) Ժողովուրդների ճակատամարտ

**18** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Մարտին Լյութերի 95 թեզիսների հրապարակումը
բ) Ամերիկայի հայտնագործումը Քրիստափոր Կոլումբոսի կողմից
գ) Խաչակրաց երրորդ արշավանքը
դ) Կոստանդնուպոլսի գրավումը թուրքերի կողմից

1) գ, դ, բ, ա
2) բ, գ, ա, դ
3) դ, գ, ա, բ
4) ա, դ, գ, բ

**19** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) «Եռյակ դաշինքի» ստեղծումը
բ) Հունաստանի անկախության ճանաչումը
գ) Ղրիմի պատերազմի սկիզբը
դ) Իտալիայի միավորման ավարտը

1) բ, գ, դ, ա
2) ա, գ, դ, բ
3) դ, ա, գ, բ
4) գ, բ, ա, դ

**20** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Իրանա-իրաքյան պատերազմի սկիզբը
բ) Գերմանիայի վերամիավորման ավարտը
գ) «Սառը պատերազմի» սկիզբը
դ) ԱՊՀ ստեղծումը

1) ա, դ, գ, բ
2) գ, ա, բ, դ
3) դ, ա, գ, բ
4) բ, դ, ա, գ

**21** **Ե՞րբ է տեղի ունեցել Կինոսկեֆալեի ճակատամարտը.**

1) Ք. ա. 202 թ.
2) Ք. ա. 146 թ.
3) Ք. ա. 190 թ.
4) Ք. ա. 197 թ.



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**28** **Ո՞րն է Եվրոպայի հնագույն համալսարանը.**

1) Օքսֆորդի
2) Փարիզի
3) Բոլոնիայի
4) Սալերնոյի

**29** **Ո՞ր պայմանագրով Ռուսաստանը դուրս եկավ Առաջին համաշխարհային պատերազմից.**

1) Սևրի
2) Վաշինգտոնի
3) Վերսալի
4) Բրեստ-Լիտովսկի

**30** **Ո՞ր խորհրդաժողովում է որոշում ընդունվել Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ) ստեղծելու մասին.**

1) Լոզանի
2) Յալթայի
3) Պոտսդամի
4) Թեհրանի

**31** **Ո՞րն էր Ք.ա. VIII դարի երկրորդ կեսին Ասորեստանի նոր վերելքի գլխավոր նախադրյալը.**

1) Թիգլաթպալասար III-ը հրաժարվեց արտաքին նվաճումներից
2) զարգացավ առևտուրը հարևանների հետ
3) Թիգլաթպալասար III-ը ստեղծեց մշտական բանակ
4) Թիգլաթպալասար III-ը հարևան երկրներից Ասորեստան հրավիրեց արհեստավորների և առևտրականների

**32** **Ի՞նչ հետևանք ունեցավ 375 թ. հոների հարձակումը Արևելյան գոթական միության վրա.**

1) Կործանվեց Հռոմեական կայսրությունը
2) Միավորվեցին օստգոթերն ու վեստգոթերը
3) Սկսվեց «Ժողովուրդների մեծ գաղթի» դարաշրջանը
4) Ստեղծվեցին բարբարոսների անկախ թագավորություններ

**33** Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Ռամզես II-ի դաշինքը Խեթական պետության հետ
բ) Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքի հիմնադրումը Ալեքսանդր Մակեդոնացու կողմից
գ) Պունիկյան պատերազմները
դ) Մուրսիլիս I-ի կողմից Բաբելոնի նվաճումը

1) ա, գ, դ, բ
2) բ, ա, դ, գ
3) գ, ա, դ, բ
4) դ, ա, բ, գ

**34** Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Պետրոս I Մեծի կասպիական արշավանքը
բ) Յասիի պայմանագրի կնքումը
գ) Քյուչուկ-Կայնարջիի հաշտության պայմանագրի կնքումը
դ) Սուվորովի իտալական արշավանքը

1) բ, ա, դ, գ
2) դ, ա, գ, բ
3) ա, գ բ, դ
4) գ, բ, ա, դ

**35** Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.

«Երկիրը, որտեղ բնակվում եք դուք, բոլոր կողմերից սեղմված է ծովով ու լեռնաշղթաներով, և դրա համար էլ նեղ է դարձել ձեր բազմամարդության պատճառով.... Ճամփա ընկեք դեպի սուրբ գերեզմանը, խլեք այդ երկիրը անհավատներից և ձերը դարձրեք: Այդ հողում «մեղր ու կարագ է հոսում»»:

1) Ինոկենտիոս III-ը
2) Ուրբանոս II-ը
3) Լևոն III-ը
4) Փոթիոս պատրիարքը





**13** Ո՞ր խորհրդաժողովում դրվեց Եվրոպայում Գերմանիայի դեմ երկրորդ ճակատի բացման խնդիրը.

1) Պոտսդամի
2) Մոսկվայի
3) Թեհրանի
4) Յալթայի

**14** Ի՞նչպես էր կոչվում Ֆրանկլին Ռուզվելտի հակաճգնաժամային քաղաքականությունը.

1) Նոր տնտեսական քաղաքականություն
2) Ռազմական կոմունիզմի քաղաքականություն
3) Մեկուսացման քաղաքականություն
4) Նոր կուրսի քաղաքականություն

**15** Ո՞րն է աբոլիցիոնիզմ բառի բացատրությունը.

1) ստրկատիրության պահպանման կողմնակիցների շարժում
2) ռեֆորմացիայի կողմնակիցների շարժում
3) ստրկատիրության վերացման կողմնակիցների շարժում
4) կանանց իրավահավասարության կողմնակիցների շարժում

**16** Ո՞րն է ինդուլգենցիա բառի բացատրությունը.

1) հերետիկոսներին պատժելու դատարան
2) Հռոմի պապի պատվիրակ
3) բանադրանք
4) մեղքերի թողության շնորհագիր

**17** Նշված պետական գործիչներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Հուլիոս Կեսար
բ) Կյուրոս Մեծ
գ) Ալեքսանդր Մակեդոնացի
դ) Սարգոն II

1) բ, ա, դ, գ
2) ա, դ, գ, բ
3) գ, դ, բ, ա
4) դ, բ, գ, ա

**7** Ե՞րբ է ստեղծվել ՆԱՏՕ-ն.

1) 1945 թ. հուլիսի 17-ին
2) 1949 թ. ապրիլի 4-ին
3) 1953 թ. մարտի 5-ին
4) 1955 թ. մայիսի 14-ին

**8** Ինչպե՞ս է ժողովուրդը բնութագրել Դրակոնի օրենքները.

1) Դրանք գրված են սրով:
2) Դրանք գրված են եղեգնյա գրչով:
3) Դրանք գրված են արցունքով:
4) Դրանք գրված են արյունով:

**9** Ո՞ր վայրում տեղի ունեցավ Պունիկյան 2-րդ պատերազմի վերջին ճակատամարտը.

1) Խառանում
2) Մագնեսիայում
3) Զամայում
4) Թերմոպիլյան կիրճում

**10** Ո՞վ է «Ջոկոնդա» կտավի հեղինակը.

1) Ռաֆայել Սանտին
2) Լեոնարդո դա Վինչին
3) Սանդրո Բոտիչելլին
4) Ջոտտոն

**11** Ո՞վ էր իտալական «կարմիր շապիկավորների հազարյակի» արշավանքի ղեկավարը.

1) Ջուզեպպե Մածծինին
2) Ջուզեպպե Գարիբալդին
3) Կամիլո Կավուրը
4) Վիկտոր-Էմանուել II-ը

**12** Ո՞ր պետության դեմ էր ուղղված Նապոլեոն Բոնապարտի մայրցամաքային շրջափակման մասին որոշումը.

1) Գերմանիայի
2) Ռուսաստանի
3) Ավստրիայի
4) Անգլիայի





**36** Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.

«Իմ իսկական փառքը նրանում չէ, որ հաղթել եմ քառասուն ճակատամարտերում: Վաթեռլոոն կջնջի այդ բոլոր հաղթանակների մասին հիշողությունները: Բայց այն, ինչը չի կարող մոռացվել, ինչը կապրի հավերժ, դա իմ «Քաղաքացիական կոդեքսն» է»:

1) Բիսմարկը
2) Ալեքսանդր I-ը
3) Նապոլեոն I-ը
4) Օլիվեր Կրոմվելը

**37** Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.

1) Նապոլեոն Բոնապարտի արշավանքը Ռուսաստան
2) Սարատոգայի ճակատամարտը
3) Փարիզի Կոմունան
4) Բոստոնյան «թեյախմությունը»

ա) 1777 թ.
բ) 1871 թ.
գ) 1812 թ.
դ) 1813 թ.
ե) 1773 թ.

1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-ե
2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
3) 1-ա, 2-բ, 3-գ, 4-ե
4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ

**38** Համապատասխանեցնել ստեղծագործությունը հեղինակի անվան հետ.

ա) «Խաղաղ Դոն» վեպ
բ) «Ավինյոնյան օրիորդներ» նկար
գ) «Սպարտակ» բալետ
դ) «Սուրբ Անտոնիոսի գայթակղումը» նկար

1) Սալվադոր Դալի
2) Չարլի Չապլին
3) Միխայիլ Շոլոխով
4) Պաբլո Պիկասո
5) Արամ Խաչատրյան

1) ա-5, բ-1, գ-2, դ-3
2) ա-3, բ-4, գ-5, դ-1
3) ա-1, բ-2, գ- 4, դ-5
4) ա-4, բ-3, գ-1, դ-2

39 Ո՞րտեղ էին անցկացվում բանաստեղծների, թատերագիրների, քանդակագործների, նկարիչների և երաժիշտների համահունական մրցույթները.

1) Թեբեում
2) Օլիմպիայում
3) Սպարտայում
4) Դելփիքում

40 Ովքե՞ր էին եզրափակում ավատատիրական աստիճանակարգության սանդուղքը.

1) կոմսերը
2) ասպետները
3) բարոնները
4) գյուղացիները

41 Ի՞նչ հետևանք ունեցավ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանի համար.

1) Անդրկովկասյան ժողովուրդները անկախություն ստացան:
2) Ռուսաստանը դուրս եկավ Առաջին աշխարհամարտից:
3) Ռուսաստանում տապալվեց միապետական կարգը:
4) Ռուսաստանը դուրս եկավ Անտանտի կազմից:

42 Նշվածներից ո՞րն էր իրանա-իրաքյան պատերազմի գլխավոր պատճառը.

1) թեոկրատական պետության ստեղծումը Իրանում
2) միջուկային զենքին տիրանալու համար մղվող պայքարը Իրաքի և Իրանի միջև
3) շահի փախուստը Իրաք
4) տարածքային վեճը Իրանի և Իրաքի միջև

43 Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հերթականությամբ.

ա) Ակցիումի ճակատամարտը
բ) Գրանիկոսի ճակատամարտը
գ) Հուլիոս Կեսարի անցնելը Ռուբիկոն գետը
դ) Սալամինի ճակատամարտը
ե) Կաննեի ճակատամարտը

1) ա, ե, գ, բ, դ
2) բ, ե, ա, գ, դ
3) դ, բ, ե, գ, ա
4) գ, ա, դ, բ, ե





# ԹԵՍՏ 2

## Ա մակարդակ

1 Ե՞րբ է տեղի ունեցել Մարաթոնի ճակատամարտը.

1) Ք. ա. 480 թ.
2) Ք. ա. 490 թ.
3) Ք. ա. 612 թ.
4) Ք. ա. 479 թ.

2 Ե՞րբ է ստեղծվել Առաջին եռապետությունը Հռոմում.

1) Ք. ա. 82 թ.
2) Ք. ա. 43 թ.
3) Ք. ա. 60 թ.
4) Ք. ա. 107 թ.

3 Ե՞րբ է Կառլոս Մեծը թագադրվել կայսր.

1) 814 թ.
2) 800 թ.
3) 768 թ.
4) 798 թ.

4 Ե՞րբ է տեղի ունեցել Բեռլինի վեհաժողովը.

1) 1877 թ. ապրիլին
2) 1878 թ. փետրվարին
3) 1878 թ. հունիսին
4) 1878 թ. օգոստոսին

5 Ե՞րբ է ընդունվել ԱՄՆ Սահմանադրությունը.

1) 1776 թ.
2) 1783 թ.
3) 1787 թ.
4) 1791 թ.

6 Ե՞րբ է կազմավորվել ԽՍՀՄ-ը.

1) 1921 թ. մարտի 12-ին
2) 1922 թ. հոկտեմբերի 6-ին
3) 1922 թ. դեկտեմբերի 30-ին
4) 1924 թ. ապրիլի 22-ին

# ԹԵՍՏ 1-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

| ԹԵՍՏ 1 | | | |
|---|---|---|---|
| Ա մակարդակ | | | |
| 1 | 2 | 26 | 3 |
| 2 | 2 | 27 | 3 |
| 3 | 3 | 28 | 3 |
| 4 | 2 | 29 | 4 |
| 5 | 1 | 30 | 2 |
| 6 | 2 | 31 | 3 |
| 7 | 3 | 32 | 3 |
| 8 | 3 | 33 | 4 |
| 9 | 4 | 34 | 3 |
| 10 | 4 | 35 | 2 |
| 11 | 3 | 36 | 3 |
| 12 | 3 | 37 | 1 |
| 13 | 2 | 38 | 2 |
| 14 | 3 | 39 | 4 |
| 15 | 2 | 40 | 2 |
| 16 | 3 | 41 | 3 |
| 17 | 1 | 42 | 4 |
| 18 | 2 | 43 | 3 |
| 19 | 1 | 44 | 3 |
| 20 | 3 | 45 | 3 |
| 21 | 1 | 46 | 2 |
| 22 | 4 | 47 | 4 |
| 23 | 4 | 48 | 2 |
| 24 | 2 | 49 | 3 |
| 25 | 2 | 50 | 1 |

| ԹԵՍՏ 1 | | | |
|---|---|---|---|
| Բ մակարդակ | | | |
| 51 | 3 | 66 | 2 |
| 52 | 1 | 67 | 2 |
| 53 | 3 | 68 | 1 |
| 54 | 3 | 69 | 2 |
| 55 | 3 | 70 | 3 |
| 56 | 2 | 71 | 1 |
| 57 | 1 | 72 | 2 |
| 58 | 1 | 73 | 1 |
| 59 | 4 | 74 | 1 |
| 60 | 2 | 75 | 1 |
| 61 | 3 | 76 | 3 |
| 62 | 2 | 77 | 2 |
| 63 | 3 | 78 | 1 |
| 64 | 2 | 79 | 1 |
| 65 | 1 | 80 | 3 |





**44** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Քիլի ռազմական նավաստիների ապստամբությունը
բ) Հիտլերի գլխավորած խռովությունը Մյունխենում
գ) Ռուրի մարզի գրավումը Ֆրանսիայի և Բելգիայի կողմից
դ) Հիտլերի վարչապետ նշանակվելը
ե) Գերմանիայի նացիոնալ-սոցիալիստական բանվորական կուսակցության հիմնումը

1) ե, ա, բ, դ, գ
2) բ, դ, ե, գ, ա
3) ա, ե, գ, բ, դ
4) դ, գ, ե, ա, բ

**45** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Փարիզի հաշտության պայմանագրի կնքումը
բ) Գեորգիևյան դաշնագրի կնքումը
գ) Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի կնքումը
դ) Տիլզիտի պայմանագրի կնքումը

1) դ, ա, բ, գ
2) ա, գ, դ, բ
3) բ, դ, ա, գ
4) գ, դ, ա, բ

**46** **Ո՞վ է ներքոհիշյալ արտահայտության հեղինակը. «Նպատակը արդարացնում է միջոցները»:**

1) Թովմա Աքվինացին
2) Նիկոլո Մաքիավելլին
3) Թոմաս Մորը
4) Էրազմ Ռոտերդամցին

**47** **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.**

«Ֆրանսիան հիրավի մի երկիր է, որտեղ բնակչության բոլոր խավերն արդեն վաղուց միահյուսվել են մի ամբողջական քաղաքական մարմնի մեջ: Երկիր, որտեղ բոլորը ցանկանում են լինել, մնալ և մեռնել որպես ֆրանսիացիներ»:

1) Շառլ դը Գոլը
2) Նապոլեոն III-ը
3) Ժորժ Կլեմանսոն
4) Վասիլի Մոդեստովը

**48** Պատմական գործչի անունը համապատասխանեցնել զբաղեցրած պաշտոնի հետ.

1) Ֆրանսիայի նախագահ
2) Մեծ Բրիտանիայի վարչապետ
3) ԱՄՆ-ի նախագահ
4) ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար

ա) Քոֆի Անան
բ) Ուինստոն Չերչիլ
գ) Նիկիտա Խրուշչով
դ) Բիլ Քլինթոն
ե) Շառլ դը Գոլ

1) 1-ա, 2-գ, 3-ե, 4-բ
2) 1-ե, 2-բ, 3-դ, 4-ա
3) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
4) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ

**49** Կատարել համապատասխանեցում.

1) Յուպիտեր
2) Ֆլորա
3) Դիանա
4) Մարս
5) Վեներա

ա) պատերազմի աստված
բ) սիրո և գեղեցկության աստվածուհի
գ) աստվածների հայրը, ամպրոպի և կայծակի աստված
դ) հրաբխի, կրակի և դարբնության աստված
ե) լուսնի, անտառների և որսորդության աստվածուհի
զ) բնության զարթոնքի և պտղաբերության աստվածուհի

1) 1-զ, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ե
2) 1-ա, 2-դ, 3-բ, 4-զ, 5-գ
3) 1-գ, 2-զ, 3-ե, 4-ա, 5-բ
4) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ե, 5-զ

**50** Համապատասխանեցնել միջնադարյան քաղաքները այն երկրների հետ, որտեղ գտնվում են.

ա) Իտալիա
բ) Անգլիա
գ) Գերմանիա
դ) Իսպանիա
ե) Ֆրանսիա

1) Օքսֆորդ
2) Մարսել
3) Կորդովա
4) Բոլոնիա
5) Քյոլն
6) Անտիոք

1) ա-4, բ-1, գ-5, դ-3, ե-2
2) ա-4, բ-6, գ-1, դ-3, ե-2
3) ա-4, բ-2, գ-6, դ-5, ե-1
4) ա-4, բ-3, գ-5, դ-6, ե-1





**80** Կատարել համապատասխանեցում.

| N | Իրադարձությունը | N | Տարեթիվը | N | Գործիչը | N | Վայրը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հռոմեական բանակի գլխովին ջախջախումը | 1 | Ք. ա. 550 թ. | 1 | Կյուրոս Մեծ | 1 | Քադեշ |
| 2 | Աթենական զորքի հաղթանակը | 2 | Ք. ա. 1274 թ. | 2 | Հաննիբալ | 2 | Էքբատան |
| 3 | Վճռական ճակատամարտը եգիպտական և խեթական զորքերի միջև | 3 | Ք. ա. 490 թ. | 3 | Միլթիադես | 3 | Կաննե |
| 4 | Մարաստանի մայրաքաղաքի գրավումը | 4 | Ք. ա. 216 թ. | 4 | Ռամզես 2-րդ | 4 | Մարաթոն |

1)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 4 | 2 | 3 |
| 2 | 3 | 1 | 4 |
| 3 | 2 | 4 | 1 |
| 4 | 1 | 1 | 2 |

2)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 4 | 2 | 3 |
| 2 | 3 | 3 | 4 |
| 3 | 2 | 4 | 1 |
| 4 | 1 | 2 | 3 |

3)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 4 | 2 | 3 |
| 2 | 3 | 3 | 4 |
| 3 | 2 | 4 | 1 |
| 4 | 1 | 1 | 2 |

4)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 4 | 2 | 3 |
| 2 | 1 | 3 | 4 |
| 3 | 2 | 3 | 1 |
| 4 | 1 | 1 | 2 |

**77** **Ո՞վ է ստորև բերված թևավոր արտահայտության հեղինակը.**
«Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»:

1) Արիստոտելը
2) Սոկրատեսը
3) Դեմոկրիտը
4) Պլատոնը

**78** **Ո՞վ է հետևյալ հայտարարության հեղինակը.**

«Ես այժմ Արևելք եմ ուղարկում իմ «Մահվան ջոկատները», որոնց հրամայված է առանց խղճահարության ու ներողամտության սպանել լեհ ցեղին պատկանող և լեհերեն խոսող բոլոր տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Միայն այս ճանապարհով մենք կշահենք այն կենսական տարածքը, որը մեզ անհրաժեշտ է…Ո՞վ է այսօր դեռ խոսում հայերի ոչնչացման մասին…»:

1) Հիտլերը
2) Գյորինգը
3) Հիմլերը
4) Մուսոլինին

**79** **Կատարել համապատասխանեցում.**

| N | Իրադարձությունը | N | Տարեթիվը | N | Գործիչը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բուրբոնների արքայատոհմի վերականգնումը | 1 | 1866-1867 թթ. | 1 | Գ. Լվով |
| 2 | Հյուսիսգերմանական միության ստեղծումը | 2 | 1917 թ. հոկտեմբեր | 2 | Վիլհելմ I |
| 3 | Ժամանակավոր կառավարության ստեղծումը Ռուսաստանում | 3 | 1814 թ. | 3 | Օ. Բիսմարկ |
| 4 | Ժողկոմխորհի ստեղծումը Ռուսաստանում | 4 | 1917 թ. փետրվար | 4 | Վ. Լենին |
| | | 5 | 1862 թ. | 5 | Լուի XVIII |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 5 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 4 | 1 |
| 4 | 2 | 4 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 5 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 2 | 1 |
| 4 | 2 | 4 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 5 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 4 | 1 |
| 4 | 2 | 1 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 5 |
| 2 | 1 | 1 |
| 3 | 4 | 1 |
| 4 | 2 | 4 |





## Բ մակարդակ

**51** **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

Հռոմի հետ կնքված հաշտության պայմանագրով սելևկյան արքա Անտիոքոս III-ը պարտավորվում էր.

1) հռոմեացիներին հանձնել ռազմական նավատորմը
2) մուծել հսկայական ռազմատուգանք
3) ազատ արձակել իր կողմից գերված Հաննիբալին
4) ազատություն շնորհել Փոքր Ասիայի երկրներին

**52** **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Չարլզ I-ին մահապատժի ենթարկեցին 1653 թ.:
2) Մարիա Անտուանետա թագուհուն ժողովուրդը հեգնանքով անվանել է «տիկին պակասորդ»:
3) 1861-1865 թթ. քաղաքացիական պատերազմն ԱՄՆ-ում ավարտվեց Հյուսիսի հաղթանակով:
4) 1870 թ. հուլիսին Նապոլեոն III-ը պատերազմ սկսեց Պրուսիայի դեմ:

**53** **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) 1944 թ. հոկտեմբերին ամերիկյան զորքերը սկսեցին Ֆիլիպինները ազատագրել ճապոնացիներից:
2) 1925 թ. Ֆրիտյոֆ Նանսենի գլխավորած պատվիրակությունն այցելեց Հայաստան:
3) 1939 թ. աշնանը ճապոնական զորքերը ներխուժեցին Խորհրդային Միության տարածք՝ Խասան լճի շրջան:
4) 1933 թ. նոյեմբերի 16-ին դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև:

**54** Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1) պանթեոն
2) նոմ
3) արքոնտ
4) պեդագոգ

ա) փոքր իշխանություն՝ կազմված առանձին հարևան բնակավայրերից
բ) արիստոկրատներից ընտրվող կառավարիչ Հին Աթենքում
գ) երեխային դպրոց ուղեկցող և տնային պարապմունքներին հետևող կրթված դայակ
դ) բոլոր աստվածների տաճար
ե) կառավարման բարձրագույն մարմին

1) 1-դ, 2-ե, 3-գ, 4-բ
2) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ
3) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
4) 1-ա, 2-դ, 3-ե, 4-գ

**55** Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1) դիրեկտորիա
2) ռայխստագ
3) գլխավոր շտատներ
4) պետական դումա

ա) Գերմանական կայսրությունում ընտրովի բարձրագույն պետական մարմին
բ) հինգ հոգուց բաղկացած գործադիր մարմին Ֆրանսիայում
գ) դասային ներկայացուցիչների ժողով
դ) Ռուսաստանի բարձրագույն օրենսդիր մարմին

1) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
3) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
4) 1-դ, 2-բ, 3-ա, 4-գ



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**75** Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Ակրա քաղաքի գրավումը խաչակիրների կողմից
բ) Վերդենի բաժանքը
գ) Մարտին Լյութերի թեզիսների փակցնելը Վիտենբերգի մայր տաճարի դռանը
դ) Սալահ-ադ-Դինի և խաչակիրների վճռական ճակատամարտը Տիբերիա քաղաքի համար
ե) Ֆերնան Մագելանի շուրջերկրյա ճանապարհորդությունը
զ) Սրբազան Հռոմեական կայսրության կայսեր Կառլոս V-ի հրաժարումը գահից
է) Կոստանդնուպոլսի գրավումը թուրք օսմանցիների կողմից
ը) խաչակրաց ութերորդ արշավանքը
թ) Ոսկե Հորդայի լծի տապալումը
ժ) Կուլիկովոյի ճակատամարտը

1) բ, դ, ա, ը, ժ, է, թ, գ, ե, զ
2) բ, դ, ա, ը, ժ, է, ե, գ, թ, զ
3) բ, դ, ա, ը, ժ, է, թ, զ, ե, գ
4) բ, դ, ա, ը, է, ժ, թ, գ, ե, զ

**76** Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Երկրորդ կայսրությունը Ֆրանսիայում
բ) «Համաձայնագիր «Մեյֆլաուերի» վրա» փաստաթղթի ստորագրումը
գ) Երրորդ հանրապետության հռչակումը Ֆրանսիայում
դ) Անկախության համար պատերազմի սկիզբը Անգլիայի և նրա ամերիկյան գաղութների միջև
ե) Նոր Մեքսիկայի և Հյուսիսային Կալիֆոռնիայի միացումը ԱՄՆ-ին
զ) Չարլզ I-ի մահապատիժը
է) Նիկոլայ II-ի հրաժարականը. Ռոմանովների արքայատոհմի ավարտը
ը) հայկական հարցի միջազգայնացումը
թ) Առևտրական և քրեական օրենսգրքերի հաստատումը Նապոլեոն I-ի կողմից
ժ) Լուի XVI-ի մահապատիժը

1) բ, զ, դ, ժ, ա, թ, գ, ե, ը, է
2) բ, զ, դ, ժ, թ, ա, գ, ը, ե, է
3) բ, զ, դ, ժ, թ, ա, գ, ե, ը, է
4) բ, զ, ժ, դ, թ, ա, գ, ե, ը, է

զ) հետադիմական գաղափարախոսություն և քաղաքականություն, որն ուղղված է նոր պատերազմի նախապատրաստմանը՝ նպատակ ունենալով փոխհատուցել նախորդ պատերազմում կրած պարտության համար և հետ վերադարձնել կորցրած տարածքները, տնտեսական և քաղաքական դիրքերը

1) 1-դ, 2-զ, 3-գ, 4-զ, 5-ե
2) 1-զ, 2-դ, 3-բ, 4-ե, 5-գ
3) 1-զ, 2-դ, 3-ե, 4-գ, 5-բ
4) 1-գ, 2-բ, 3-զ, 4-ա, 5-դ

**73** **Նշվածներից որո՞նք են հռոմեական նվաճումների պատճառներ.**

ա) նորանոր տարածքներ ձեռք բերելու ձգտումը, որոնք վերածվում էին «հասարակական հողի» և վաճառվում Հռոմի քաղաքացիներին
բ) ստրուկներ ձեռք բերելու մշտական պահանջը
գ) տնտեսության զարգացումը և բնակչության աճը
դ) Հռոմում ներքաղաքական լարվածությունը թուլացնելու ձգտումը
ե) բնական աղետների հաճախացումն Իտալիայում
զ) նոբիլների և հեծյալների՝ խոշոր կալվածքներ ստեղծելու ձգտումը

1) ա, բ, գ, զ,
2) ա, դ, ե, զ
3) բ, գ, դ, ե
4) ա, գ, ե, զ

**74** **Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք նպաստել են Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի փլուզմանը.**

ա) Գերմանիայի հարձակումը Չեխոսլովակիայի վրա
բ) ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կողմից թողտվության և անվճռականության քաղաքականությունը
գ) Գերմանիայի կողմից ֆինանսական հատկացումների մեծացումը բանակի վերականգնման և զինման համար
դ) խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագիրը
ե) Գերմանիայի կողմից ռազմատուգանքների վճարումների դադարեցումը
զ) Ճապոնիայի ագրեսիան Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության դեմ

1) բ, գ, ե
2) ա, դ, զ
3) գ, ե, զ
4) բ, ե, զ





**56** **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) օկուպացիա
2) ագրեսիա
3) ինտերվենցիա
4) կոնտրիբուցիա

ա) մեկ կամ մի քանի պետությունների բռնի միջամտությունը մեկ այլ պետության ներքին գործերին
բ) մի պետության կողմից մյուս պետության ամբողջ տարածքի, կամ դրա մի մասի բռնի միավորում կամ զավթում
գ) պատերազմում պարտված երկրի տարածքի ժամանակավոր գրավումը հաղթող երկրի զինված ուժերի կողմից
դ) մի պետության կողմից ուժի անօրինական գործադրում մեկ այլ պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության կամ անկախության դեմ
ե) պատերազմում պարտված երկրի կողմից կատարվող ֆինանսական վճարում հաղթող երկրին

1) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-ե
3) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
4) 1-ա, 2-ե, 3-բ, 4-գ

**57** **Որո՞նք էին դասական ժամանակաշրջանի հունական մշակույթի ծաղկման նախադրյալները.**

ա) հին հույների գեղեցիկի բնատուր զգացողությունը
բ) կորնթոսյան կոնգրեսի որոշումները
գ) վերնախավի և ժողովրդի ակտիվ մասնակցությունը մշակույթի ստեղծմանը
դ) հռոմեական մշակույթի ազդեցությունը
ե) մշակութային սերտ կապերը Առաջավոր Ասիայի երկրների հետ

1) ա, գ, ե
2) բ, դ, ե
3) բ, գ, դ
4) ա, գ, դ

**58** **Նշվածներից որո՞նք են հանդիսանում խաչակրաց շարժման արտաքին պատճառ.**

ա) թուրք-սելջուկների կողմից Փոքր Ասիայի մեծ մասի նվաճումը և Կոստանդնուպոլսին սպառնացող վտանգը
բ) առաջին խաչակրաց արշավանքին նախորդած երեք տարիների անընդմեջ անբերրիությունն ու սովը
գ) դեպի Երուսաղեմ քրիստոնյաների ուխտագնացությանը սելջուկների հարուցած խոչընդոտները
դ) հայրական ժառանգությունից ասպետների զրկված լինելու հանգամանքը
ե) թուրք-սելջուկների հարկային ծանր քաղաքականությունը

1) ա, գ
2) բ, ե
3) ա, բ
4) գ, դ

**59** **Նշված պնդումներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են ԽՍՀՄ-ի փլուզման հիմնական պատճառներ.**

ա) ազգային հարցի սրումը
բ) Չեռնոբիլի աղետը
գ) սոցիալ-տնտեսական ճգնաժամը
դ) սոցիալիստական համակարգի փլուզումը
ե) քաղաքական ճգնաժամը
զ) Գերմանիայի վերամիավորումը
է) ժողովրդավարական շարժման ուժեղացումը

1) ա, բ, գ, է
2) դ, ե, զ, է
3) գ, դ, ե, զ
4) ա, գ, ե, է

**60** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Աքեմենյան Պարսկաստանի անկումը
բ) Սինաքերիբի կողմից Բաբելոնի գրավումն ու ավերումը
գ) Հիքսոսների վտարումը և Եգիպտոսի վերամիավորումը
դ) Խեթական իշխանությունների միավորումը և միասնական թագավորության ստեղծումը
ե) Էլամի զորքերի Բաբելոնիա կատարած ավերիչ արշավանքը

1) ա, ե, գ, դ, բ
2) դ, գ, ե, բ, ա
3) բ, ա, ե, գ, դ
4) դ, ե, բ, գ, ա





**71** **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) հեղափոխական դիկտատուրա
2) լեգիտիմիզմ
3) Սահմանադիր ժողով
4) Օրենսդիր կորպուս
5) Ազգային կոնվենտ

ա) օրինական համարվող հասարակական կարգի վերականգնում
բ) բարձրագույն օրենսդիր իշխանություն Ֆրանսիայում
գ) բռնության վրա հիմնված, մեծ իրավունքներ ունեցող իշխանություն
դ) իշխանության ժամանակավոր մարմին, որը ստեղծվում է սահմանադրության մշակման և հաստատման նպատակով
ե) բարձրագույն օրենսդիր մարմին Անգլիայում
զ) օրենսդիր և գործադիր բարձրագույն մարմին Ֆրանսիայում

1) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ, 5-զ
2) 1-դ, 2-ա, 3-զ, 4-բ, 5-գ
3) 1-ա, 2-բ, 3-զ, 4-դ, 5-ե
4) 1-գ, 2-ա, 3-զ, 4-բ, 5-դ

**72** **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) ռևանշիզմ
2) շովինիզմ
3) տոտալիտարիզմ
4) ֆաշիզմ
5) միլիտարիզմ

ա) քաղաքական հոսանք, որի ներկայացուցիչները տիրող հասարակարգի արմատական փոփոխությունների, պայքարի վճռական միջոցների, անհաշտելի, ծայրահեղ հայացքների կողմնակիցներ են
բ) ավտորիտար իշխանության ձև
գ) քաղաքականություն, որն ուղղված է սպառազինությունների աճի և նվաճողական պատերազմի նախապատրաստմանը
դ) ազգայնականության ծայրահեղ դրսևորում
ե) քաղաքական հոսանք որին բնորոշ են հակակոմունիզմը, բռնությունը, շովինիզմը, ռասիզմը, ամբողջատիրությունը, առաջնորդի պաշտամունքը, հասարակական կյանքի բոլոր բնագավառների ռազմականացումը

**69** **Նշված պայմաններից առանձնացնել երեքը, որոնք տեղ են գտել 1807 թ. Տիլզիտի պայմանագրում.**

ա) Ռուսաստանը պարտավորվում էր միանալ ցամաքային շրջափակմանը:
բ) Նապոլեոն Բոնապարտը ճանաչում էր Ռուսաստանի իրավունքները մերձկասպյան շրջանների նկատմամբ:
գ) Ֆրանսիան ազատ գործելու հնարավորություն էր ստանում Եվրոպայի մեծ մասում:
դ) Ռուսաստանը պարտավորվում էր զենք ու զինամթերք մատակարարել Ֆրանսիային:
ե) Ռուսաստանը ազատ գործելու հնարավորություն էր ստանում Եվրոպայի հյուսիսում և հարավ-արևելքում:
զ) Նապոլեոնը պարտավորվում էր միջնորդի դեր ստանձնել ռուս-պարսկական հարաբերությունների կարգավորման գործում:
է) Ֆրանսիան տասը տարվա ընթացքում չպետք է հարձակվեր Ռուսաստանի վրա:

1) ա, բ, գ
2) ա, գ, ե
3) դ, ե, զ
4) ե, զ, է

**70** **Գտնել տերմինների համապատասխան բացատրությունները.**

ա) բնատնտեսություն
բ) գերագահություն
գ) էդիկտ
դ) լեգատ
ե) խալիֆ

1) տնտեսության այն ձևը, երբ բոլոր ապրանքները պատրաստվում էին բնական հումքից
2) տնտեսության այն ձևը, երբ բոլոր ապրանքները արտադրվում և սպառվում էին տեղում
3) մուսուլմանների քաղաքական և հոգևոր առաջնորդ
4) գերադաս դիրք
5) Հռոմի պապի պատվիրակ
6) հրովարտակ
7) հռչակագիր

1) ա-2, բ-4, գ-6, դ-3, ե- 5
2) ա-1, բ-7, գ-6, դ-5, ե-4
3) ա-2, բ-4, գ-6, դ-5, ե-3
4) ա-1, բ-6, գ-7, դ-5, ե-4



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**61** **Պատմական գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հաջորդականության.**

ա) Վլադիմիր Սվյատոսլավիչ
բ) Օդոակր
գ) Ալքուին
դ) Վաղես
ե) Բարսեղ I

1) դ, բ, գ, ա, ե
2) բ, դ, գ, ե, ա
3) դ, բ, գ, ե, ա
4) գ, դ, բ, ա, ե

**62** **Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է բերված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) «Փառահեղ հեղափոխությունը» Անգլիայում
2) Աուստեռլիցի ճակատամարտը
3) ԱՄՆ անկախության հռչակագրի ընդունումը
4) Նապոլեոն Բոնապարտի աքսորը Սուրբ Հեղինե կղզի

**63** **Ո՞վ է հետևյալ արտահայտության հեղինակը.**

«Սողոմոն, ես հաղթեցի քեզ» ;

1) Կառլոս Մեծը
2) Իվան Ահեղը
3) Հուստինիանոս I-ը
4) Թովմա Աքվինացին

**64** **Ո՞ր գործիչն է հետևյալ խոսքերի հեղինակը.**

«Ֆրանսիան տանուլ է տվել ճակատամարտը, բայց ոչ պատերազմը ամբողջությամբ»;

1) Պետենը
2) Շառլ դը Գոլը
3) Ժորժ Կլեմանսոն
4) Պուանկարեն

**65** **Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակի անվան հետ.**

| | |
|---|---|
| ա) «Օրենքների ոգին» | 1) Օսվալդ Շպենգլեր |
| բ) «Հասարակական դաշինք» | 2) Օտտո Բիսմարկ |
| գ) «Եվրոպայի մայրամուտը» | 3) Ժան Ժակ Ռուսո |
| դ) «Մտքեր և հուշեր» | 4) Շառլ Մոնտեսքյո |
| ե) «Տիրակալը» | 5) Վոլտեր |
| | 6) Նիկոլո Մաքիավելի |

1) ա-4, բ-3, գ-1, դ-2, ե-6
2) ա-5, բ-2, գ-4, դ-1, ե-3
3) ա-3, բ-1, գ-6, դ-4, ե-5
4) ա-2, բ-3, գ-5, դ-6, ե-4

**66** **Կատարել համապատասխանեցում: Պատասխանները լրացնել առաջին սյունակում տրված իրադարձությունների հերթականության համաձայն.**

| N | Իրադարձությունը | N | Վայրը | N | Տարեթիվը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Պրոտեկտորատի հաստատումը | 1 | Ֆրանսիա | 1 | 1795 թ. |
| 2 | Դիրեկտորիայի ստեղծումը | 2 | ԱՄՆ-ի հյուսիս | 2 | 1620 թ. |
| 3 | Նոր Անգլիայի առաջացումը | 3 | ԱՄՆ-ի հարավ | 3 | 1653 թ. |
| 4 | Կոնֆեդերացիայի ստեղծումը | 4 | Անգլիա | 4 | 1861 թ. |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 3 |
| 2 | 2 | 1 |
| 3 | 2 | 2 |
| 4 | 3 | 4 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 3 |
| 2 | 1 | 1 |
| 3 | 2 | 2 |
| 4 | 3 | 4 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 2 |
| 2 | 1 | 4 |
| 3 | 4 | 1 |
| 4 | 2 | 3 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 3 |
| 2 | 1 | 1 |
| 3 | 2 | 2 |
| 4 | 3 | 2 |





**67** **Նշված պայմաններից ընտրել չորսը, որոնք տեղ են գտել Սևրի պայմանագրում.**

ա) Էրզրումի, Տրապիզոնի, Բիթլիսի և Վանի վիլայեթների տարածքներում ստեղծվում էր «Հայկական օջախ»:
բ) Հայաստանը ունենում էր ելք դեպի Սև ծով:
գ) Հայաստանին էր տրվում համարյա ամբողջ Էրզրումի վիլայեթը, Տրապիզոնի վիլայեթի մի մասը, Վանի ու Բիթլիսի վիլայեթների երկու երրորդը:
դ) Միացյալ Հայաստանը ընդգրկում էր 160 հազար քառակուսի կմ տարածք:
ե) Հայաստանին տրամադրվում էր Նախիջևանի երկրամասի հովանավորությունը:
զ) Թուրքական բանակը առավելագույնը կարող էր ունենալ 50 հազար զինվոր և սպա:
է) Վերանայվում էր Կարսի պայմանագիրը:

1) ա, բ, դ, ե
2) բ, գ, դ, զ
3) ա, բ, ե, է
4) գ, դ, ե, է

**68** **Բերված փաստարկներից ընտրել չորսը, որոնք նպաստեցին Եգիպտոսի տնտեսության վերելքին Միջին թագավորության տարիներին.**

ա) ավերված ջրանցքների և ամբարտակների վերականգնումը
բ) տնտեսության մեջ երկաթի կիրառումը
գ) բրոնզե գործիքների կիրառումը, որը նպաստեց արհեստագործության զարգացմանը
դ) Ֆայումի օազիսում կառուցված ջրամբարի շնորհիվ մշակովի հողատարածքների մեծացումը
ե) հիքսոսների կողմից Եգիպտոսի նվաճումը
զ) Առաջավոր Ասիայի բոլոր երկրների հետ առևտրական աշխույժ կապերի հաստատումը

1) ա, գ, դ, զ
2) բ, դ, ե, զ
3) ա, դ, ե, զ
4) ա, բ, գ, ե